

*«Տ. Վարդան Ս. Արք. Տէմիրճեան Հրատարակչական Հիմնադրամ»
Մատենաշար Հատոր 1*

*«H.E. Archbishop Vartan Demirdjian Publication Fund»
Book Series Volume 1*



ԿՂԵՐԱԿԱՆԸ

THE CLERGYMAN

**S. ՎԱՐԴԱՆ Ս. ԱՐԹԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՄԻՐՃԵԱՆ
H.E. ARCHBISHOP VARTAN DEMIRDJIAN
1939-2004**

**Պատրաստեց՝ Սեպուհ Դադտոյեան
Prepared by Sebouh Baghdoyan**

*«Տ. Վարդան Ս. Սրբ. Տէմիրճեան Հրատարակչական Հիմնադրամ»
Մատենաշար Հատոր 1
«H.E. Archbishop Vartan Demirdjian Publication Fund»
Book Series Volume 1*

ԿՂԵՐԱԿԱՆԸ

THE CLERGYMAN

**Տ. ՎԱՐԴԱՆ Ս. ՍՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՄԻՐՃԵԱՆ
H.E. ARCHBISHOP VARTAN DEMIRDJIAN
1939-2004**

**Պատրաստեց՝ Սեպուհ Դադոնյան
Prepared by Sebouh Baghdoyan**

*Մենք մահին ենք մահը մեր
Միայն գործն է միշտ անմահ
Յովհաննէս Թումանեան*

*We are for death and death is ours
Deeds are only lastingly immortal
Hovhannes Toumanian*

*Հրատարակութիւն Հայրրինթ, Պէյրութ, Լիբանան, Մարտ 2006
Published by Hyeprint, Beirut, Lebanon, March 2006*

*Սոյն յուշագիրքը կը հրատարակուի մեկնաստեփանմբ
Տէր և Տիկին Սեպուհ և Շողիկ Պաղտոյեաններու
This commemoration book is published with the donation of
Mr. & Mrs. Sebouh & Shoghig Baghdoyan*

Բովանդակութիւն/Contents

<i>Յառաջաբան</i>	<i>5</i>
<i>Preface.....</i>	<i>6</i>
<i>Հայրապետական Ողջոյնի Գիր</i>	<i>7</i>
<i>Patriarchal Message of Tribute</i>	<i>7</i>
<i>Մանկութիւն և Դպրեմանք</i>	<i>9</i>
<i>Childhood & Seminary.....</i>	<i>11</i>
<i>Վարդապետական Կոչում</i>	<i>16</i>
<i>Clerical call</i>	<i>20</i>
<i>Առաջնորդ Ատրպատականի Հայոց Թեմի, Թաւրիզ</i>	<i>49</i>
<i>Prelate of the Armenian Prelacy of Azerbaijan, Tabriz.....</i>	<i>55</i>
<i>Առաջնորդական Փոխանորդ Յունաստանի Հայոց Թեմի, Աթէնք .</i>	<i>67</i>
<i>Vice-Prelate of the Armenian Prelacy of Greece, Athens</i>	<i>70</i>
<i>Եպիսկոպոսական գործունէութիւն</i>	<i>73</i>
<i>Episcopal activities</i>	<i>75</i>
<i>Վախճանում</i>	<i>110</i>
<i>The demise</i>	<i>115</i>
<i>Գրական վաստակ</i>	<i>148</i>
<i>Literary activities</i>	<i>159</i>

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Սոյն յուշագիրքի պատրաստութիւնն ու հրատարակումը նախաձեռնեցինք՝ որպէս սիրոյ և յարգանքի տուրք մեր շատ սիրելի վախճանեալ հարազատին՝ հոգելոյս Տ. Վարդան Ս. Արք. Տէմիրճեանին:

Շատ դժուար է անհնարին է հարեւանցի ակնարկներով ժողովել եւ համատեղել հանգուցեալ Սրբազան Հօր կենսագրութեան և վիթխարի գործունէութեանց վերաբերեալ նիւթերն ու փաստաթուղթերը: Նաեւ չէ կարելի լուռ անցնիլ անոնց վրայէն:

Չուարթերես, գործունեայ, հոգեսէր, ծառայասէր եւ համակրելի անհատականութեամբ օժտուած այս կղերականը շուրջ 50 տարիներ անդուլ գործեց որպէս աստուածաբան, հայագէտ, պատմագէտ, եկեղեցագէտ, ծիսագէտ, ձեռագրագէտ, Առաջնորդ, ուսուցիչ, խմբագիր, ատենագիր, բանախօս, տպարանապետ, մատենադարանապետ եւ Կաթողիկոսարանի Հիւրընկալ:

Իր զանազան պաշտօններուն մէջ ան ցոյց տուաւ սքանչելի կորով, ձկունութիւն, յատուկ համբերատարութիւն եւ բարեխիղճ առաքինութիւն, միանգամայն խիստ նախանձախնդիր իր կոչումին պարտականութեանց եւ իր եկեղեցւոյն հմայքին՝ լեզուով, գրչով եւ գործով:

Իր հրատարակած զանազան կրօնապատմագիտական հատորներու կողքին, Սրբազան Հօր գրական եւ բանասիրական ուսումնասիրութիւնները գրաւեցին էջերը ՀԱՍԿ, ԷՋՄԻՍՄԻՆ եւ ՍԻՈՆ եկեղեցական ամսագիրներու եւ այլեւայլ հանդէսներու՝ որոնց մէջ էր նաեւ Վիեննայի Միփթարեան Վանքի ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՆ, ինչպէս նաեւ այլ բանասիրական բովանդակութեամբ հայ եւ օտար ամսաթերթեր եւ հրատարակութիւններ:

Պարտք կր համարենք մեր շնորհակալիքը յայտնել բոլոր այն ազգականներուն և բարեկամներուն՝ որոնք սիրայօժար իրենց անսակարկ մասնակցութիւնը բերին հանգուցեալ հոգելոյս Տ. Վարդան Ս. Արք. Տէմիրճեանին նուիրուած այս յուշագիրքի պատրաստութեան ու հրատարակութեան աշխատանքներուն:

Սեպուհ Պաղտոյեան

9 Սեպտեմբեր 2005

Վիեննա, Աւստրիա

PREFACE

This commemoration book was initiated and prepared as a token of love and respect towards our very beloved bereaved relative, His Eminence Archbishop Vartan Demirdjian.

It is rather difficult and impossible to collect and compile all the information and documentation related to the biography and the colossal spectrum of activities of the late Srpazan. It is equally irresponsible not to reflect on them.

This cheerful, vigorous, caring, helpful and admirably gifted clergyman was continuously active over 50 years as a theologian, an armenolog, a historian, a specialist in ecclesiastics and rites, an expert of manuscripts, a Prelate, a teacher, an editor, a rapporteur, a lecturer, a publisher, a librarian and as the Host of the Catholicosate.

In carrying out these functions, he demonstrated superb capability, flexibility, unique endurance and compassionate honesty, combined with a profound eagerness in fulfilling the duties of his call, as well as contributing to the splendor of his church through his speech, writings and deeds.

Beside his various theological and historical publications, the results of Srpazan's literary and philological research filled the pages of the ecclesiastical journals HASK, ETCHMIADZIN and SION, and other reviews, among which were HANTES AMSORIA of the Mekhitarist Congregation of Vienna, as well as different Armenian and foreign literary periodicals and publications.

We feel indebted to express our thanks to all those relatives and friends, who contributed to the preparation of this commemoration book, devoted to His Eminence the late Archbishop Vartan Srpazan Demirdjian.

Sebouh Baghdoyan

*9 September 2005
Vienna, Austria*

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՂՋՈՅՆԻ ԳԻՐ
PATRIARCHAL MESSAGE OF TRIBUTE



ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԱՆԹԻՈՒՆՍ – ԼԻԲԱՆԱՆ

թիվ _____

Ամսթիվիս, _____

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՂՋՈՅՆԻ ԳԻՐ

Հայրապետական օրհնությամբ կ'ողջունենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան վախճանեալ երէց միաբաններէն Տ. Վարդան Արք. Տէմիրճեանի կեանքին ու ծառայութեան նուիրումն այս Յուշագրքին հրատարակութիւնը: Հանգուցեալ Արքագանը շուրջ կէս դար մեր Սուրբ Աթոռին հաւաքական կեանքին ու առաքելութեան բերաւ իր գործօն ու ամբողջական մասնակցութիւնը:

Իր ունեցած հոգեմտաւոր կարելիութիւնները ի սպաս դրաւ մեր Սուրբ Աթոռի ծառայութեան առաւել կենսագործման՝ որպէս թեմակալ Առաջնորդ. Տպարանի Տեսուչ, Մատենադարանապետ եւ Կիրակնօրեայ Վարժարաններու Տեսուչ: Իր ստանձնած բոլոր պարտականութիւններուն մէջ Արքագանը ցուցաբերեց նուիրում, աշխատունակութիւն ու նախանձախնդրութիւն:

Վարդան Արքագանի հոգեւոր ծառայութեան մէջ յատուկ տեղ գրաւեց մտաւորական աշխատանքը: Արդարեւ, իր հեղինակած գրքերով, յօդուածներով ու կատարած պրպտումներով ան կարելի էր նպաստ մը բերաւ հայագիտական մարզին:

Ներկայ Յուշագրքը իր ընդգրկած վկայութիւններով, կենսագրական լայն ծանօթութիւններով, թղթակցութիւններով ու նկարներով վստահաբար լայն ծանօթութիւն պիտի տայ հանգուցեալ Արքագանի կեանքին ու ծառայութեան մասին:

Այս առիթով կը գնահատենք հանգուցեալ Արքագանին քննադատ եւ քննադատ, Տէր եւ Տիկին Սեպուհ եւ Շողիկ Պաղտոյեանը, որոնք ոչ միայն նախածնունցին "Տ. Վարդան Ա. Արք. Տէմիրճեան Հրատարակչական Հիմնադրամ" մատենաշարի այս առաջին հատորի հրատարակութեան, այլ նաեւ սիրայօժար կերպով հոգացին անոր ծախսերը:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ վաստակաշատ Արքագանի հոգին ընդունի իր երկնային թագաւորութեան մէջ:

Քրիստոնէական սիրոյ ջերմ ողջունիւ,

Արքատոմարտ

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

14 Մարտ 2006
Ամսթիվիս, Լիբանան

ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԴՊՐԵՎԱՆՔ

Աւագանի անունով՝ Յովսէփ, ծնած է Այնթապցի Յակոբ եւ Կեսարացի Վարդուհի (ծնեալ Եղիազարեան) Տէմիրձեաններու ընտանեկան բոյնին մէջ, 20 Ապրիլ 1939-ին, Պէյրութի Էշրէֆիէ քաղաքամասի ձերմակ Տուներ թաղամասին մէջ: Իր նախակրթութիւնը կը ստանայ ծննդավայրի Ս. Յակոբայ Եփրեմեան (այժմ Գէորգ Չաթալյաշեան) Ազգային Վարժարանի մանկապարտէզին ու նախակրթարանին մէջ, տնօրէն Ղազար Չարըքի պաշտօնավարութեան տարիներուն: Այս դպրոցին մէջ իրեն ուսուցիչ կ'ունենայ բացի տնօրէնէն՝ նաեւ Պրնք. Կարապետ Թաթուլեան, Միհրան Խրիմեան, Յովհաննէս Քեհիայեան, Արժ. Տ. Յուսիկ Այանեան, Տ. Խորէն Աճէմեան եւ Տ. Գէորգ Յարութիւնեան Ա. Քահանայ հայրերը, Տիկին Ալիս Խրիմեան (այժմ Մինասեան), Տիկին Բերկրուհի Առաքելեան, Օր. Օլիվիա Պալեան, Օր. Ազատուհի Քէվրանյաշեան եւ այլք:

1952-ի Յուլիսին յատուկ քննութենէ մը ետք՝ կ'ընդունուի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեմանքը, ուր մուտք կը գործէ նոյն տարւոյ Հոկտեմբերին, եկեղեցական դաստիարակութիւն ստանալու եւ հետագային հոգեւորական ասպարէզ ընդգրկուելու ջանք փափաքով: Դպրեմանքի ժառանգաւորաց բաժինը կ'աւարտէ 1956-ի Յունիսին եւ քանի մը ընկերներով կը վկայուի, ընդ Տեսչութեամբ Տ. Գերենիկ Եպս. Փռլատեանի:

Ապա Գերայ. Տ. Գարեգին Վրդ. Սարգիսեանի (ապա Կաթողիկոս) Տեսչութեան ներքեւ, երկու դասընկերներով (Աբրահամ Հանէշեան եւ Յակոբ Եղիայեան) կը շարունակէ Դպրեմանքի Ընծայարանի բաժնի դասընթացքներուն հետեւիլ՝ 1956-1957 ուսումնական տարեշրջանին: Գնահատուելով իր ձեռք բերած յաջողութիւններուն եւ եկեղեցասէր զգացումներուն համար, Երան. Տ. Ջարեհ Ա. Կաթողիկոսի կարգադրութեամբ, Դպրեմանքի Ե. եւ Ջ. դասարաններու սաներով Աւագ Սարկաւագ կը ձեռնադրուի 4 Նոյեմբեր 1956-ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, ձեռամբ Լիբանանի Հայոց Առաջնորդ եւ ապա Մեծի Տանն Կիլիկիոյ Երան. Տ. Խորէն Ա. Կաթողիկոսի:

Ընծայարանի Ա. տարուան դասընթացքի աւարտին, Կիլիկեան Ս. Աթոռին միաբաններու թիւը ամբողջացնելու եւ հրաժարող միաբաններու պաշտօնները ստանձնելու մտաճումով, Երան. Տ.

Ջարեհ Ա. Կաթողիկոսի կարգադրութեամբ, Յովսէփ Սարկաւազ եւ իր դասընկերները, ինչպէս նաեւ Ընծայարանի Բ. դասարանի սաները իրենց հետ ունենալով Պրն. Սարգիս Բախտիկեանը, կուսակրօն քահանայ ձեռնադրուելու գրաւոր ուխտը կատարելէ ետք, 2 Յունիս 1957-ին, Անթիլիասի Մայր Տաճարին մէջ, ձեռամբ նոյն-ինքն Երան. Տ. Ջարեհ Ա. Կաթողիկոսին, կուսակրօն Քահանայ կը ձեռնադրուին: Յովսէփը կը վերակոչուի՝ Տ. ՎԱՐԴԱՆ ԱԲԵՂԱՅ, որուն ձեռնադրութեան կնքահայրութիւնը կը ստանձնէ Լիբանանահայ Ազգային Բարերար Տիար Պօղոս Նաճարեանը:

Հոգ2. Տ. Վարդան Արեղայիի օծակիցներն են՝ Տ.Տ. Արսէն Արդ. Աւետիքեան, Երուանդ Արդ. Արէլեան, Գրիգոր Արդ. Փիտէճեան, Թորգոմ Արդ. Հանէշեան, Վահրամ Արդ. Եղիայեան (վերջին այս հինգը կարգաթող եղած են) եւ Ներսէս Արդ. Բախտիկեան (ապա Արքեպիսկոպոս):

Գպրեվանքի մէջ ան իրեն ուսուցիչ կ'ունենայ, բացի Տեսուչ Տ. Գերենիկ Եպս. Փոլատեանէն եւ Տ. Գարեգին Վրդ. Սարգիսեանէն, նաեւ Գերշ. Տ. Արտաւազ Արքեպիսկոպոս Թրթռեանը, Հոգ2. Տ. Մեսրոպ Ծ. Վրդ. Գրիգորեանը (ապա Արքեպիսկոպոս), Գերշ. Տ. Սահակ Այվազեան, Տ. Գնէլ Ճէրէճեան եւ Տ. Արտակ Մանուկեան Արքեպիսկոպոսները, Պրնք. Բիւզանդ Եղիայեանը, Սիմոն Սիմոնեանը, Խորէն Գաբիկեանը, Համբարձում եւ Հրաշ Պէրպէրեանները, Շահան Պէրպէրեանը, Յակոբ Պուճիգանեանը, Մուշեղ Իշխանը, Սարգիս Խայեանը, Դոկտ. Յարութիւն Էսէկիւլեանը եւ այլք:

Գպրեվանքի Ընծայարանի բաժնի իր թերի ուսումը լրացրնելու համար, Հայր Վարդան ինքաշխատութեամբ կը սերտէ Բ. եւ Գ. կարգերու դասանիւթերու բազմազրեալ դասագիրքերը, միաժամանակ բարձրագոյն ուսման հետեւելու իր փափաքին ընդառաջելով՝ Երան. Տ. Ջարեհ Ա. Կաթողիկոս կ'արտօնէ որ ան հետեւի Պէյրութի Յիսուսեան Հայրերու Սէն Ժոզէֆ Համալսարանի Աստուածաբանութեան, Հայրաբանութեան եւ Ընդհանուր Եկեղեցւոյ Պատմութեան դասընթացքներուն, ինչ որ կ'իրագործուի 1958-1961 թուականներուն: Հակառակ իր ազատ ունկնդիր մը ըլլալուն, ան մեծապէս կ'օգտուի այս դասընթացքներէն, շնորհիւ ներհուն ուսուցիչներ՝ Հայր Տը Լանվէրսէնի, Հայր Սապոյի, Հայր Խալիֆէի եւ այլոց նման պատկառազոր անձնաւորութիւններու ցուցմունքներուն:

CHILDHOOD & SEMINARY

His Eminence Archbishop Vartan Demirdjian was born in the Eshrefieh district of Beirut on 20 April 1939 as the son of Hagop and Vartouhi (born Yeghiazarian) Demirdjian. His baptismal name was Hovsep (Joseph). After attending the Kevork Tchatalbashian (formerly Yepremian) national school of the Saint Hagop Church, and upon his ardent desire to pursue a clerical vocation, the late Srpazan was accepted in October of 1952 into the Theological Seminary of the Catholicosate of the Great House of Cilicia in Antelias.

On 4 November 1956, Father Vartan was ordained a deacon and a celibate priest on 2 June 1957 by the late Catholicos Zareh I, sponsored by the Lebanese-Armenian philanthropist Mr. Boghos Nadjarian.

To further his education, from 1958-1961, he attended courses on theology, general church history and armenology at the St. Joseph University of the Jesuit Fathers.



*Նորածին Յովսէփը իր հօր Յակոբի եւ մօր Վարդուհիի
ձեռքերուն մէջ
The newly born Hovsep (Joseph) held by his father Hagop and
mother Vartouhie*



*Փոքրիկն Յովսէփ, Էշրէֆիէ, 1944
Little Hovsep, Eshrefieh, 1944*



Եպիսկոպոսական դպրոցական դասարանի և ուսուցիչների խումբ, Յուլիս 1952
Elementary graduation class of the Yepremian National School, June 1952




Ժառանգաւորաց Ա. Կարգի աշակերտ, 1953
Seminary 1st Class student, 1953



*Ժառանգաւորաց Բ. Կարգի աշակերտ՝ Պաալպէքի
աւերակներուն մէջ, 1954*
Seminary 2nd Class student, at the ruins of Baalbeck, 1954



*Ժառանգաւորաց Գ. Կարգի աշակերտ՝ Յովսէփ Սարկաւազ
Անթիլիասի ծովափին վրայ, 1955*
*Seminary 3rd Class student, Deacon Hovsep at the seashore of
Antilias, 1955*



Ժառանգաւորաց Գ. Կարգի աշակերտ, 1956
Seminary 4th Class student, 1956

ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ

Ձեռնադրութեան թուականէն սկսեալ Հայր Վարդան կը կոչուի վանական պաշտօններու, առաջին հերթին ստանձնելով 1957 Յուլիսին ՀԱՍԿ ամսաթերթի խմբագիրի պաշտօնը, զոր կը վարէ մինչեւ 1958-ի Սեպտեմբեր ամիսը: Ապա՝ Գաւազանակիրի պաշտօնը կը վարէ 1957-1963 եւ 1974-1977 թուականներուն:

Այնուհետեւ, Երան. Տ. Ջարեհ Ա. Կաթողիկոսի կարգադրութեամբ, Հայր Վարդան կը ստանձնէ Վանքի Գրատան (1957-1959), Յովսէփեան Թանգարանի եւ Փոյի-Մատենադարանապետի պաշտօնները (1958-1961), որոնք կը վարէ մինչեւ 1961-ի Յուլիս ամիսը: Ապա կը վարէ Մատակարարապետի պաշտօնը 1976-1978, ինչպէս նաեւ Կաթողիկոսարանի Հիւրընկալի պաշտօնը 1974-էն մինչեւ 1997:

1961-ի Յուլիսի 3-ին ան կը կոչուի Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու Տեսուչի պաշտօնին, զոր անձնուիրաբար կը կատարէ մինչեւ 1963-ի Սեպտեմբեր 9-ը: Իր պաշտօնավարութեան ընթացքին, Հայր Վարդան կը ձեռնարկէ նոր Կիրակնօրեայ Դպրոցներ բանալու աշխատանքին՝ Լիբանանի, Սուրիոյ եւ Պարսկաստանի մէջ: Ապա նոյն շարժումը իր արձագանգը կը գտնէ Յունաստանի մէջ: Յատուկ թոյլտուութեամբ՝ ան Կիրակնօրեայ Դպրոցները կ'այցելէ Սուրիոյ՝ Հալէպ եւ Գամիշլի, Կիպրոսի՝ Նիկոսիա քաղաքներու եւ Քուէյթի:

Իբրեւ Վարիչ Տնօրէն, ան ձեռնարկեց նաեւ նախկին խմորատիպ ՄԵՐ ԿԵԱՆՔԸ ամսաթերթին փոխարէն (որ արդէն իսկ դադրած էր հրատարակուելէ) նորի մը հրատարակութեան: Երան. Տ. Ջարեհ Ա. Կաթողիկոսին արտօնութեամբ՝ Հայր Վարդան Լիբանանի Կրթական Նախարարութեանէն յաջողեցաւ ԴՐԱԶԱՐԿ նոր ամսաթերթին արտօնագիրը ձեռք բերել՝ Կաթողիկոսարանի անունով: Սոյն ամսաթերթը շուրջ տարի մը լոյս ընծայուելէ ետք, յաջորդ Վարիչ-Տնօրէններ զայն շարունակեցին՝ ի վերջոյ որպէս Տարեգիրք լոյս ընծայելու համար զայն:

Երան. Տ. Խորէն Ա. Կաթողիկոս, Իրանի Ատրպատականի թեմի թեմական Պագամաւորական Ժողովին ուղղեալ իր 20 Օգոստոսի 1963 թուակիր սրբատառ կոնդակին մէջ, այս գործունէութեան մասին հետեւեալը կ'արձանագրէ.-

«Նորընտիր Առաջնորդ Տէր Վարդան Վարդապետ, Կաթողիկոսարանէն ներս պանապան պաշտօններ վարած, եօթը տարիներու եկեղեցական փորձառութեամբ օժտուած, Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու որպէս Վարիշ-Տնօրէն բեղուն գործունէութիւն ունեցած, հաւատաւոր եւ անձնդիր, գիտակից եւ նուիրուած երիտասարդ հոգեւորական մըն է»:

Իսկ Իրանահայ մտաւորական եւ ԱԼԻԲ օրաթերթի խմբագրապետ Պրն. Տաճատ Պօղոսեան, կը գրէ հետեւեալը.-

«Գեր. Հայր Սուրբը Անթիլիասի վանական պաշտօնավարութեան տարիներին առանձնապէս արդիւնաւոր գործունէութիւն է ունեցել Կիրակնօրեայ Դպրոցների տեսչութեան շնորհիւ: Նա այդ պաշտօնը վարում է մեծ եռանդով ու նուիրումով, բաւականաւալով սոսկ միաբանական ռոճիկով: Նրա տեսչութեան տարիներին Կիրակնօրեայ Դպրոցների թիւը 23-ից բարձրանում է 46-ի՝ Լիբանանում, Սուրիայում, Կիպրոսում եւ Քովէյթում: Իր պաշտօնի բերումով նա այցելում է այդ շրջանները եւ անհրաժեշտ աջակցութիւնն քննարկում այդ դպրոցների բարգաւաճման գործին: Իր պաշտօնավարութեան ընթացքում նա ստանձնում է նաեւ Կիրակնօրեայ Դպրոցների «ԴՐԱԶԱՐԿ» պաշտօնաթերթի խմբագրի պարտականութիւնը»: (Տե՛ս՝ Դիւան Ատրպատականի Հայոց Պատմութեան, Ա. հատոր, 1966, Թեհրան, էջ 248):

Երջանկալիշատակ Տ. Զարեհ Ա. Կաթողիկոս, գնահատելով Հայր Վարդանի բոլորանուէր ծառայութիւններն ու տքնաջան աշխատանքը, 2 Սեպտեմբեր 1960 թուականի պաշտօնագրով՝ անոր շնորհեց Վարդապետական ականակուն լանջախաչ կրելու իրաւունք: Իսկ Երան. Տ. Խորէն Ա. Կաթողիկոս Հայր Սուրբին շնորհեց Մանիշակագոյն ծաղկեայ Փիլոն կրելու իրաւունք՝ գնահատելու համար զինք, «որպէս ժիր մշակ եւ մշտաբարուն հովիւ Հայց. Ս. Եկեղեցւոյ»:

1957-1958 տարիներու Վարիշի պաշտօնի կողքին՝ ան 25 տարիներ շարունակ կ'աշխատակցի ՀԱՄԿ ամսաթերթին որպէս խմբագրական կազմի անդամ (1971-1977, 1979, 1981 եւ 1995-1996), Խմբագրապետ (1977) եւ Վարիշ եւ Խմբագիր (1980): Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին որոշումով կազմուած ՀԱՄԿ-ի Խմբագրական կազմին անդամ կը նշանակուի նաեւ հոգեւոյս Վարդան Սրբապանը (1995 Մայիսէն սկսեալ), թէ խմբագրելով կարգ մը յօդուածներ եւ տեղեկատուութիւններ, եւ թէ՛ ալ սրբագրելով շարուած բոլոր յօդուածները:

16 տարիներ վարած ըլլալով Տպարանի Տեսչութիւնը (1981-1997), Ս. Աթոռի Միաբանութեան միակ Միաբանն էր, որ այսքան երկարատեւ պաշտօնավարութիւն մը ունեցած էր Ս. Աթոռի Տպարանին մէջ: 1985-ին Տպարանը օժտուեցաւ Օֆսէթ բաժինով եւ Համակարգիչ մեքենաներով:

Իր վանական պաշտօններուն գուգընթաց՝ Հայր Վարդան 1958-էն ի վէր ստանձնած է ուսուցչական պաշտօնները:-

ա. ԳՊՐԵՎԱՆՔ

1960-1962 - Դասաւանդած է Հայաստանի Աշխարհագրութիւն (Ժառանգաւորած Բ. դասարան) եւ Հայց. Եկեղեցւոյ Պատմութիւն, Հայ Մատենագրութիւն եւ Գրաբար (Քահանայից դասարան):

1971-1972 - Հայ Մատենագրութիւն, Հայոց Պատմութիւն, Հայաստանի Աշխարհագրութիւն, Ս. Գիրք եւ Ընդհանուր Ազգաց Պատմութիւն (Նախապատրաստական, Ա. եւ Բ. դասարաններ եւ Քահանայից դասարան):

1974-1975 - Ս. Գիրք (Նախապատրաստական եւ Ա. դասարան) եւ Հայ Մատենագրութիւն եւ Հայոց Պատմութիւն (Քահանայից դասարան):

1995-1996 - Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Պատմութիւն (Ընծայարան Գ. դասարան):

1996-1997 - Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Պատմութիւն (Քահանայից դասարան):

բ. ՄԱՐՏԻԿԵԱՆ ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆ (այժմ Եղիշէ Մանուկեան Ազգային Գոլէճ)

1958-1963 եւ 1972-1975 - Կրօն, Հայոց Պատմութիւն, Աշխարհագրութիւն եւ Հայերէն լեզու, նախակրդարանի դասարաններուն:

գ. ՉԱԹԱԼ ՊԱՇԵԱՆ ԱԶԳ. ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ (Նախապէս Եփրեմեան Վարժարան, Էշրէֆիէ)

1957-1963, 1971-1972 եւ 1974-1977 թուականներուն - Հայ Մատենագրութիւն, Հայոց Պատմութիւն, Կրօնագիտութիւն, Հայ Գրականութեան Պատմութիւն, Հայոց լեզու եւ Աշխարհագրութիւն՝ Միջնակարգի եւ Երկրորդականի դասարաններուն:

դ. Ս. ԳԵՈՐԳ ԳՈԼԷՃ ՄԱՐՈՆԻԹ ՀԱՄԱՅՆՔԻ - ԸՐՆԸԹ ՇԱՀՈՒԷՆ

Մասնաւոր դասեր Հայերէն լեզուի, Գոլէճի հայ աշակերտութեան (200-ի մէջէն 45 աշակերտներուն), ծնողներուն ցանկութեամբ եւ Գոլէճի Տնօրէն Գերպ. Տ. Ռոլան Ապու ժառուէ Վարդապետին արտօնութեամբ (ապա Արքեպիսկոպոս):

Հայր Վարդանի եւ քանի մը նուիրեալ ազգայիններու ջանասիրութեամբ, Ս. Յակոբայ Եփրեմեան Ազգային Վարժարանի Շրջանաւարտից Միութիւնը կը կազմուի 1960-ին, որուն նախագահ կ'ընտրուի ինքը: Սոյն Միութիւնը մշակութային ձեռնարկներով ու դասախօսութիւններով, մինչեւ 1963 թուականը բազմաթիւ ձեռնարկներ կու տայ Էշրէֆիէի ԱԶՍԱՄԱՐՏ ակումբին մէջ, շրջան մը՝ դպրոցին շուրջ հետաքրքրութիւն արթնցնելով թաղեցիներուն մօտ:

Հոգ2. Տ. Վարդան Արեղան՝ Վանական Իշխանութեան ներկայացնելով իր աւարտաճառը՝ «ՅՈՒՑԱԿ ՁԵՌԱԳՐԱՅ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ», կ'արժանանայ յատուկ գնահատանքին բանասէրներ՝ Յարութիւն Քիրտեանի, Հայր Յովհաննէս Մըսրըլեանի, Գարեգին Վրդ. Սարգիսեանի, Բիւզանդ Եղիայեանի, Սիմոն Սիմոնեանի եւ Հայր Համազասպ Վրդ. Ոսկեանի, որուն ի վարձատրութիւն, ան վարդապետական աստիճան կը ստանայ 18 Հոկտ. 1959-ին, ձեռամբ Տ. Զարեհ Ա. Կաթողիկոսին, Անթիլիասի Մայր Տաճարին մէջ, վեց օծակից միաբան եղբայրներով:

Այս առթիւ Տ. Զարեհ Ա. Կաթողիկոս, հետեւեալը կը հրատարակէ ՀԱՄԿ-ի մէջ.- «Ի մօտոյ տպագրութեան պիտի յանձնուի Ս. Աթոռոյս միաբան Հոգ2. Տ. Վարդան Վրդ. Տէմիրճեանի ՄԱՅՐ ՅՈՒՑԱԿ ՁԵՌԱԳՐԱՅ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ երկասիրութիւնը»: (ՀԱՄԿ, 1960, Յունուար, կողքի ներքին երեսի վրայ):

21 Յունիս 1972-ին, Լիբանանի Հազմիէ շրջանի մայր պողոտային վրայ իր կնքահօր՝ Պրն. Պօղոս Նաճարեանին տալիք այցելութեան նախօրեակին, ինքնաշարժ մը զինք կը զգետնէ, եւ շուրջ տարի մը ան կը դատապարտուի անգործութեան (հիւանդանոցի եւ տան խնամքին առարկայ դառնալով):

CLERICAL CALL

After his ordaining, Father Vartan was entrusted with a number of monastic functions:

- *Respectively Managing Director, Member of the Editorial Board and Editor-in-Chief of the editorial offices of HASK, the Cilician See's official publication (1957-1996);*
- *The staf-bearer of the Catholicos (1957-1963 and 1974-1977);*
- *Responsible for the bookstore of the monastery (1957-1959);*
- *Administrator of the Hovsepien Museum (1958-1961);*
- *Deputy-Librarian (1958-1961);*
- *In-charge of the catering services (1976-1978);*
- *Host of the Catholicosate (1974-1997);*
- *Director of the Sunday Schools of the Armenian Church (1961-1963). During his tenure, the number of the schools in Lebanon, Syria, Cyprus and Kuwait increased from 23 to 46;*
- *Initiator of the TRAZARK monthly newsletter; and*
- *Director of the publishing house of the Catholicosate (1981-1997).*

Parallel to these duties, Father Vartan has taught for many years in the Cilician Seminary; the Yeghiche Manougian (formerly Mardigian) national school in Beirut; the Kevork Tchatalbashian (formerly Yepremian) national school of the Saint Hagop Church; and the St. George Maronite College in Kernet Shehwan.

After successfully presenting his thesis entitled "Catalogue of the Manuscripts of the Catholicosate of the Great House of Cilicia", the late Zareh I Catholicos conferred upon him, on 18 October 1959, the title of Vartabed (i.e. Doctor of the Armenian Church).

On 21 June 1972, while crossing the main highway of Hazmiyeh in Lebanon, Father Vartan was hit by a car and severely injured, leading to a one-year period of extended treatments.



ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵԾԻՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԱՆՐԱԽԱՆՈՒՄ - ԼԻԲԱՆԱՆ

Թիվ 126/74

Ամբիվիտա, 22 Մարտ 1974

Գերապատիւ
Տ. Վարդան Ժ. Վրդ. Տէմիրճեան

Ա Ս Տ

Գեր. Հայր Սուրբ,


Հայրապետական այսու պաշտօնազրույժ զՁեզ կը նշանակենք Գաւազանակիր եւ Հիւրընկալ Կաթողիկոսարանիս:

Լիայոյս ենք որ զիտակից պարտաճանաչութեամբ պիտի կատարէք Ձեր զոյգ պաշտօնները եւ մեծապէս օգտակար պիտի հանդիսանաք Մեզի:

Մաղթելով Ձեզի քաջաոգոյժ եւ երջանկալից կեանք,

Մնամ օրհնածայն սիրոյ չեմք ողջունիլ

Աղօթարար


ԽՈՐԷՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Letter of appointment by Khoren I as Staf-bearer and Host of the Catholicosate

4 Յունուար 1977

Համաձայնագիր 1976-1977 տարեշրջանի համար միայն

Հայր Վարդան Երզ. վարդապետ Տէմիրճեանի եւ Ազգ. Գէորգ Զաթալպաշեան
Երկրորդական Վարժարանի Տնօրէնութեան միջեւ կը կայանայ հետեւեալ
համաձայնութիւնը. - Հայր Վարդան Տէմիրճեան յանձն կ'առնէ
պաշտօնավարել Վարժարանիս մէջ որպէս այցելու ուսուցիչ: Եր
դասուանդէ շաբաթական 20 պահ, Հայերէն Գրականութիւն եւ Հայոց
Պատմութիւն, Երկրորդական քաժնի դասարաններուն համար:

Ազգ. Գէորգ Զաթալպաշեան Երկրորդական Վարժարանի խնամակալութիւնը
եւ Տնօրէնութիւնը յանձն կ'առնէ վճարել տարեկան 3600 լիբ. ոսկի:
Վերոյիշեալ վճարումին վերջին մասնավճարը կը դառնայ 1976-1977
տարեշրջանի, պաշտօնավարութեան հատուցումը:

Հայր Վարդան Տէմիրճեան



Ծանօթ: Կը հասկնանք թէ յաջորդ տարեշրջանին վճարումը կը կատարուի
10 մասնավճարներու հիման վրայ, եւ տարեկան վճարումը կը
վերածուի 4500 լիբ. ոսկիի:

الهاتف : ٣٣٣٩١٥ - الأثرقية - الجميتاوي - بيروت - لبنان

*Letter of agreement between the Principal of the Kevork Tchatalbashian School
and Father Vartan for the latter to teach Armenian literature and Armenian*

Ernst

University Security

25

Պատանդեա Առաքել Լազար

Առաքել Լազար,

Քո անբարեկամ ինքնաշարժը և քո անբարեկամ
անբարեկամ - Առաքել Լազար Լազար Լազար =
Քո անբարեկամ անբարեկամ, և անբարեկամ անբարեկամ
Լազար =

Քո անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ
անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ = Լազար Լազար Լազար Լազար =

Լազար Լազար անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ - անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ
և անբարեկամ անբարեկամ =

Լազար Լազար անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ
անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ =

Քո անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ
անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ =
անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ =

Լազար Լազար անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ
անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ =
անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ =

Լազար Լազար անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ անբարեկամ

Առաքել Լազար Լազար Լազար Լազար Լազար Լազար Լազար Լազար

Citation by Father Grigoris Manian, General Abbot of the Mekhitarist Congregation
of Vienna

Wanted to write something - but
nothing came - just the old same old
in my life.

— 245 —
— 245 —

- Ringa 48 Spruiffe. Duce blyfde:

- Soudar 9^e jhri/5 epistola pravitry kharpr:

1890. 1891. 1892. 1893. 1894. 1895. 1896. 1897. 1898. 1899. 1900. 1901. 1902. 1903. 1904. 1905. 1906. 1907. 1908. 1909. 1910. 1911. 1912. 1913. 1914. 1915. 1916. 1917. 1918. 1919. 1920. 1921. 1922. 1923. 1924. 1925. 1926. 1927. 1928. 1929. 1930. 1931. 1932. 1933. 1934. 1935. 1936. 1937. 1938. 1939. 1940. 1941. 1942. 1943. 1944. 1945. 1946. 1947. 1948. 1949. 1950. 1951. 1952. 1953. 1954. 1955. 1956. 1957. 1958. 1959. 1960. 1961. 1962. 1963. 1964. 1965. 1966. 1967. 1968. 1969. 1970. 1971. 1972. 1973. 1974. 1975. 1976. 1977. 1978. 1979. 1980. 1981. 1982. 1983. 1984. 1985. 1986. 1987. 1988. 1989. 1990. 1991. 1992. 1993. 1994. 1995. 1996. 1997. 1998. 1999. 2000. 2001. 2002. 2003. 2004. 2005. 2006. 2007. 2008. 2009. 2010. 2011. 2012. 2013. 2014. 2015. 2016. 2017. 2018. 2019. 2020. 2021. 2022. 2023. 2024. 2025. 2026. 2027. 2028. 2029. 2030. 2031. 2032. 2033. 2034. 2035. 2036. 2037. 2038. 2039. 2040. 2041. 2042. 2043. 2044. 2045. 2046. 2047. 2048. 2049. 2050. 2051. 2052. 2053. 2054. 2055. 2056. 2057. 2058. 2059. 2060. 2061. 2062. 2063. 2064. 2065. 2066. 2067. 2068. 2069. 2070. 2071. 2072. 2073. 2074. 2075. 2076. 2077. 2078. 2079. 2080. 2081. 2082. 2083. 2084. 2085. 2086. 2087. 2088. 2089. 2090. 2091. 2092. 2093. 2094. 2095. 2096. 2097. 2098. 2099. 2100. 2101. 2102. 2103. 2104. 2105. 2106. 2107. 2108. 2109. 2110. 2111. 2112. 2113. 2114. 2115. 2116. 2117. 2118. 2119. 2120. 2121. 2122. 2123. 2124. 2125. 2126. 2127. 2128. 2129. 2130. 2131. 2132. 2133. 2134. 2135. 2136. 2137. 2138. 2139. 2140. 2141. 2142. 2143. 2144. 2145. 2146. 2147. 2148. 2149. 2150. 2151. 2152. 2153. 2154. 2155. 2156. 2157. 2158. 2159. 2160. 2161. 2162. 2163. 2164. 2165. 2166. 2167. 2168. 2169. 2170. 2171. 2172. 2173. 2174. 2175. 2176. 2177. 2178. 2179. 2180. 2181. 2182. 2183. 2184. 2185. 2186. 2187. 2188. 2189. 2190. 2191. 2192. 2193. 2194. 2195. 2196. 2197. 2198. 2199. 2200. 2201. 2202. 2203. 2204. 2205. 2206. 2207. 2208. 2209. 2210. 2211. 2212. 2213. 2214. 2215. 2216. 2217. 2218. 2219. 2220. 2221. 2222. 2223. 2224. 2225. 2226. 2227. 2228. 2229. 2230. 2231. 2232. 2233. 2234. 2235. 2236. 2237. 2238. 2239. 2240. 2241. 2242. 2243. 2244. 2245. 2246. 2247. 2248. 2249. 2250. 2251. 2252. 2253. 2254. 2255. 2256. 2257. 2258. 2259. 2260. 2261. 2262. 2263. 2264. 2265. 2266. 2267. 2268. 2269. 2270. 2271. 2272. 2273. 2274. 2275. 2276. 2277. 2278. 2279. 2280. 2281. 2282. 2283. 2284. 2285. 2286. 2287. 2288. 2289. 2290. 2291. 2292. 2293. 2294. 2295. 2296. 2297. 2298. 2299. 2300. 2301. 2302. 2303. 2304. 2305. 2306. 2307. 2308. 2309. 2310. 2311. 2312. 2313. 2314. 2315. 2316. 2317. 2318. 2319. 2320. 2321. 2322. 2323. 2324. 2325. 2326. 2327. 2328. 2329. 2330. 2331. 2332. 2333. 2334. 2335. 2336. 2337. 2338. 2339. 2340. 2341. 2342. 2343. 2344. 2345. 2346. 2347. 2348. 2349. 2350. 2351. 2352. 2353. 2354. 2355. 2356. 2357. 2358. 2359. 2360. 2361. 2362. 2363. 2364. 2365. 2366. 2367. 2368. 2369. 2370. 2371. 2372. 2373. 2374. 2375. 2376. 2377. 2378. 2379. 2380. 2381. 2382. 2383. 2384. 2385. 2386. 2387. 2388. 2389. 2390. 2391. 2392. 2393. 2394. 2395. 2396. 2397. 2398. 2399. 2400. 2401. 2402. 2403. 2404. 2405. 2406. 2407. 2408. 2409. 2410. 2411. 2412. 2413. 2414. 2415. 2416. 2417. 2418. 2419. 2420. 2421. 2422. 2423. 2424. 2425. 2426. 2427. 2428. 2429. 2430. 2431. 2432. 2433. 2434. 2435. 2436. 2437. 2438. 2439. 2440. 2441. 2442. 2443. 2444. 2445. 2446. 2447. 2448. 2449. 2450. 2451. 2452. 2453. 2454. 2455. 2456. 2457. 2458. 2459. 2460. 2461. 2462. 2463. 2464. 2465. 2466. 2467. 2468. 2469. 2470. 2471. 2472. 2473. 2474. 2475. 2476. 2477. 2478. 2479. 2480. 2481. 2482. 2483. 2484. 2485. 2486. 2487. 2488. 2489. 2490. 2491. 2492. 2493. 2494. 2495. 2496. 2497. 2498. 2499. 2500. 2501. 2502. 2503. 2504. 2505. 2506. 2507. 2508. 2509. 2510. 2511. 2512. 2513. 2514. 2515. 2516. 2517. 2518. 2519. 2520. 2521. 2522. 2523. 2524. 2525. 2526. 2527. 2528. 2529. 2530. 2531. 2532. 2533. 2534. 2535. 2536. 2537. 2538. 2539. 2540. 2541. 2542. 2543. 2544. 2545. 2546. 2547. 2548. 2549. 2550. 2551. 2552. 2553. 2554. 2555. 2556. 2557. 2558. 2559. 2560. 2561. 2562. 2563. 2564. 2565. 2566. 2567. 2568. 2569. 2570. 2571.

74. 19/73

James Bayley

[illegible]

2500 ft. 1/2 m. Ch. 1/2 m. 1/2 m.

2 Long Dphs 197%

Chrysomelidae

*Citations by the Armenian intellectual Aram Haigaz and Archbishop
Zareh Aznavorian*

გვინახავს და აქვეა დასაწყისი. აქვეა დასაწყისი.
დასაწყისი დასაწყისი დასაწყისი:

2-й вариант изложения - в 4. Изменил
 в 2-й раз изложил содержание. Изменил
 3-й раз изложил содержание. Изменил
 4-й раз изложил содержание. Изменил
 5-й раз изложил содержание. Изменил

[illegible]

London U.K. January 24 1981

I feel privileged and honoured to be able to pen a few words to wish Bishop Vartan Demirdjian good health and God's Speed in his valiant efforts of keeping the ARMENIAN Christian Faith alive amongst all the Armenian Communities wherever he goes, as Paul the Apostle. As a born Welshman I was blessed to have an Armenian wife and in heart, spirit and feeling became an Armenian.

The Bishop is a godly man and I pray that in his time God will bless him and he will see an unified ARMENIA

It has been wonderful to have
such a man as a friend.

May God give him health + strength
to carry on his work for many
years to come.

David H. Saunders
5 Gordon Road
Ealing, London W5
W5 2AD

Tels 01-997-0201
01-998-9452

Citation by Bishop

ԿԵՍԱՐԻՈՅ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
SOCIETE DE BIENFAISANCE DE CESAREE

Bayreuth, le 19
1988 - p. 13 Dec. 1996

Autorisée par
Le Gouvern. Libanais
suivant recepisé
No. 3096 du 15 Dec. 1937
du Minist. de l'Intérieur

بموجب ترخيص
من وزارة الداخلية
تاريخ ١٥ كانون اول ١٩٣٧
نمرة ٣٠٩٦

[illegible]

3440F SHTZT43TAY 44771U 6543TAY

ZALKA - AMARAT CHALHOUN - IMM. GROUND TEL.:

Note of appreciation by Messrs. Garbis Yessayan (Chairman) and Hagop Duniayan (Secretary) of the Benevolent Society of Caesarea



Բաժնապատկան ձեռնադրութեան արարողութենէն տեսարան մը, ձեռամբ Երան. Տ. Զարեհ Ա.
 Կաթողիկոս Փայասլեանի (Աջէն երրորդ ծնկաչոր), Անթիլիաս, 2 Յունիս 1957
Priesthood ordination ceremony by Catholicos Zareh I (3rd from right kneeling), Antilias, 2 June 1957



*Քահանայական ձեռնադրութեան ընթացքին՝ Յովսէփ Սրկ. կը վերապաշտօնի Տ. Վարդան
Արեղայ Տմիրճեան*

During the priesthood ordination ceremony, Deacon Hovsep is renamed Friar Vartan Demirdjian



Չեռնադրեալ Արեղաները իրենց կնքահայրերուն հետ - Վարդան Արեղան իր կնքափոր՝
 Ալգայիյն Բարերար լուսահոգի Պօղոս Նաճարեանի հետ
*The ordained Friars with their sponsors - Friar Vartan with his Sponsor, National
 Philanthropist the late Boghos Nadiarian*




*Լիբանանահայ Ազգային Բարերար հանգ. Երուանդ Տէմիրճեանի
բնակարանին մէջ, ընկերակցութեամբ Տ. Պսակ Քին. Եթարեանի,
Տ. Գէորգ Վրդ. Կարալիսեանի, Տ. Մեսրոպ Վրդ. Գրիգորեանի
և Տ. Գիւտ Վրդ. Նազգաշեանի, 1958*

*In the residence of the Lebanese-Armenian National
Philanthropist the late Yervant Demirdjian, accompanied by
Fathers Besag Yetarian, Kevork Garbisian, Mesrob Krikorian
and Kued Nakkashian, 1958*



*Վանքի բակին մէջ, 1959
In the monastery yard, 1959*



Նորաօծ Տ. Վարդան Արեղայ Տէմիրճեան, Փետրուար 1959
The newly ordained Friar Vartan Demirdjian, February 1959



Նահատակաց Սրբ. Մարտիրոս առջեւ՝ Հ. Սմբատ Վրդ.

Լափաճեանի հետ, Յուլիս 1960

*With Father Sempad Lapadjian in front of the Holy Martyrs Chapel
in Antilias, 1960*



Հայր Սուրբը շրջապատուած իր ընտանեկան պարագաներով եւ ազգականներով, Լիբանանի Մթէշն գիւղին մէջ, 1960

Father Vartan surrounded by members of his family and relatives in the village of Metevn (Lebanon). 1960



Երեքհարիւրամեակի հանդիսութիւն Պէյրութի Էշրէֆիէ
 թաղի Լազարիսթներու Սէն Վէնսան տը Փօլ
 Միաբանութեան հաստատման, Ապրիլ 1960
*300th anniversary celebrations of the founding of the Lazarist
 St. Vincent de Paul Congregation, Eshrefieh, April 1960*



Էշրէֆիէ.ի Ազգային Եփրեմեան վարժարանի Մանկապարտէզի Ամաղերջի Հանդէսէն ետք,
 աւարտականներուն հետ (իր կողքին կրտսեր քոյրը Տիկ. Շողիկ Դաղսովեան), Յունիս 1961
 With the graduates of the Yepranian National School after their year-end ceremony (standing next to him is
 his sister Mrs. Shoghig Baghdovan). June 1961



Ազգային եփրհանդեսի շրջանավարտների Միությունը Երևանի ազգային դպրոցում, 1962
With the Alumni of the Yerevan National School, 1962



*Արկաժահար անկողնոյ կը ծառայէ՝ յետ ոտքի գործողութեան,
Օգոստոս 1972*

*After being hit by a car, operated on his foot and subjected to bed
rest, August 1972*



*Մարտիկեան Ազգային վարժարանի շրջանաւարտներուն
հետ, Յունիս 1974*

With the graduates of the Mardigian National School, June 1974

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ, ԹԱԻՐԻԶ

Ատրպատականի պատմական թեմի Առաջնորդ Տ. Արսէն Վրդ. Աւետիքեանի հրաժարումէն ետք, Թեմի Պատգամաւորական Ժողովը իր 13 Օգոստոս 1963-ի ԻԹ. նիստին մէջ, միաձայնութեամբ Առաջնորդ ընտրեց Հայր Վարդանը: Վեհափառ Խորէն Ա. Կաթողիկոս այս ընտրութիւնը կը վաւերացնէ իր 20 Օգոստոսի 1963 թուակիր սրբատառ կոնդակով, յայտնելով այս առթիւ թէ.

«Լիայոյս ենք որ, Գերապատիւ Հայր Սուրբը, իր առաջնորդութեան ընթացքին եւս նոյն խանդով եւ եռանդով, իմաստութեամբ ու խոհեմութեամբ պիտի գործէ, եւ օգտակար հանդիսանայ տիրախնամ Թեմիդ եկեղեցական, դպրոցական, շինարարական եւ ազգային ու հասարակական բոլոր մարպերուն մէջ եւ լիովին պիտի արդարացնէ Մեր յոյսերը եւ Ձեր ակնկալութիւնները»:

Հայր Վարդան Թաւրիկ ժամանեց 12 Սեպտ. 1963-ին եւ 14 Սեպտ.ին Գերշ. Տ. Արտակ Արքեպիսկոպոսին հետ եւ Թաւրիկահայ Ժողովականներով այցելեց Արեւելեան Ատրպատականի նահանգապետ՝ Պրն. Գեհկանին, Գաւառապետին եւ Զօրաց հրամանատարին: Իր անդրանիկ պատարագը մատոյց՝ 15 Սեպտ.ին, Խաչվերացի տօնին օրը: Հովուական իր առաջին այցելութիւնը տուաւ Սալմաստի (նախկին Շահփուր կամ Դիլման) Հայութեան, 31 Հոկտ.-3 Նոյ.ին, 1963:

Ատրպատականի Հայոց Պատգամաւորական Ժողովին որոշումով, Ծայրագոյն Վարդապետութեան աստիճան կը ստանայ 13 Յունիսի 1965-ին, ձեռամբ Երան. Տ. Խորէն Ա. Կաթողիկոսին, Անթիլիասի Սայր Տաճարին մէջ, օծակից ունենալով Հոգշ. Տ. Վահրամ Վարդապետը (այժմ կարգաթող) եւ Սմբատ Վրդ. Լափաճեանը (ապա Առաջնորդ Հիւս. Ամերիկայի Արեւմտեան Շրջանի Կիլիկեան Թեմին եւ Արքեպիսկոպոս):

Պրն. Տաճատ Պօղոսեան, գնահատելով Հայր Վարդանի Ատրպատականի Հայոց Թեմին մէջ, 12 Սեպտեմբեր 1963-էն սկսեալ գործունէութիւնը, հետեւեալը կ'արձանագրէր 1966-ին.

«Անդրադառնալով Հայր Սուրբի՝ Ատրպատականի թեմում ունեցած եռամեայ շրջանի գործունէութեան, գոհունակութեամբ պիտի յիշատակենք, որ պաշտօնավարութեան առաջին օրերից իսկ, իր ուշադրութիւնը կենտրոնացրել է Ատրպատականի թեմի եկեղե-

ցիներին բարեկարգությունն վրայ, կատարելով անհրաժեշտ լրացումներն ու նորոգությունները:

«Ստորեւ մի շարք թուումները վերջին երեք տարիների ընթացքին այս ուղղությամբ կատարուած աշխատանքների մասին.

«Վերանորոգուել են Թաւրիզի Լիւաւա թաղի Ս. Սարգիս Եկեղեցին ու նախագաւիթը եւ ընդարձակուել խորանը: Այս նորոգութեանց ծախսերը հոգացել են ճարտ. Պրն. Կարօ Էրզնանը եւ Պրն. Արգար Ենովքեանը (ի յիշատակ երկրորդի կնոջ՝ Տիկ. Ռոպա Ենովքեանի):

«Յարդարուել են Թաւրիզի Ղալա թաղի Ս. Աստուածածին Մայր Եկեղեցու աստիճանները:

«Ղալայի ազգապատկան խանութների շարքին կառուցուել են երկու նոր խանութներ:

«Նորոգուել են Ղալայի նախկին Ս. Աննայեան դպրոցի երկու սենեակները եւ ընդհանուր վերանորոգումով հնարաւոր է եղել այդ շէնքը վերածել յարմարաւոր բնակարանի՝ ծխատէր քահանայի եւ Առաջնորդարանի երեք պաշտօնեաների բնակութեան համար:

«1963 թ. Դեկտեմբերին կատարուել է Թաւրիզի ՄԻԲԱՅԷԼ ՍԱՀԱԿԵԱՆ Օրիորդաց Միջնակարգ Դպրոցի պաշտօնական բացումը, որին ներկայ են եղել Թեհրանի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Արտակ Արքեպս. Մանուկեանը եւ Սահակեան ու Սարգսեան բարերարներն ընտանեօր:

«Նոյն թուին, Կիւլպէնկեան Հիմնարկութեան աջակցութեամբ, հիմնական նորոգութեան է ենթարկուել Թաւրիզի Թամարեան դպրոցի առաջին յարկի առաստաղը, որ ենթակայ էր փլուզման:

«Թաւրիզի Ս. Աստուածածին մատուռ ուխտավայրին (Մառալանի այգիում) պարտէզը, Պրն. Հրաչ Հայրապետեանի բարերարութեամբ, օժտուել է ջրհորով եւ ելեքտրական ջրհան մեքենայով, ի յիշատակ իր հանգուցեալ ծնողների եւ եղբայրների:

«1965-ին, Նիւ Եորքաքնակ Պրն. Մեսրոպ Աւագեանի նիւթական աջակցութեամբ, հիմնական նորոգութեան է ենթարկուել Ատրպատականի Առաջնորդարանի շէնքի (նախապէս Թեմական Կենտրոնական դպրոց) ճակատը:

«Անցնող երկու տարիների ընթացքին, ճարտ. Պրն. Կարօ Էրզնանի նիւթական աջակցութեամբ նոր պարիսպ է քաշուել Առաջ-

նորդարանի հիւսիսային կողմում եւ նորոգուել է արեւմտեան պարիսպը:

«Նորոգուել են նաեւ Առաջնորդարանի երկրորդ յարկի երկու անգործածելի սենեակները: Առաջին սենեակը նորոգուել է Պրնք. Խաչիկ Ղազարեանի եւ Անդրանիկ Միմոնեանի ծախսով եւ յատկացուել թանգարանի՝ Երջանկայիշատակ Մելիք Թանգեան Սրբազանի անուամբ, իսկ երկրորդը նորոգուել է Պրն. Պարոյր Յարութիւնեանի ծախսով եւ ծառայում է իբրեւ մատենադարան:

«Հայր Սուրբն առանձին ուշադրութիւն է դարձրել գաւառական շրջանների վրայ եւ քանիցս այցելել Շահփուր (Սալմաստ), Ռըզայիէ (Ուրմիա), Ղարադաղ (Արասպարան), Մարաղա եւ այլն, պատարագել է, քարոզել եւ հոգեւոր մխիթարութիւն բաշխել այդ շրջանների հայ համայնքներին, միաժամանակ հաւաքելով վիճակագրական ստոյգ եւ մանրամասն տեղեկութիւններ այդ գաւառների մասին:

«Նոյն տարիների ընթացքին, ազգային բարերարներ Պրնք. Գուրգէն եւ Վազգէն Սարգսեանների նիւթական աջակցութեամբ, պարսպապատուել է Շահփուրի Հաֆթվան գիւղի գերեզմանատունը, իսկ Պրն. Արշաւիր Մանասէրեանի նուիրատուութեամբ նորոգուել է նոյն գաւառի Փրիշատ ուխտավայրը:

«Այսպիսով, նախկին մի շարք ազգային շէնքերի վրայ կատարուել են խիստ անհրաժեշտ նորոգութիւններ եւ յաւելուածական մասնակի կառուցումներ, որով ապահով եւ ներկայանալի վիճակի մէջ են դրուած ազգապատկան այդ կալուածները:

«1965 թ. ամրանը, Թեհրանում, մի քանի հայրենակիցներից կազմուած յանձնախմբի միջոցով, Հայր Սուրբը կարողացաւ գոյացրնել 250.000 ռիալի նուիրատուութիւն, Ատրպատականի Առաջնորդարանի պարտքերը վճարելու եւ նորոգութեանց աշխատանքները կատարելու համար:

«Նրա նախաձեռնութեամբ եւ Թեմական Խորհրդի հաւանութեամբ, Թաւրիզում կազմուեց Եկեղեցասէր Կանանց Խնամակալ Մարմին, որ նուիրուած էր Եկեղեցիների բարեկարգութեան եւ կարգապահական աշխատանքներին: Իբրեւ այդ Մարմնի պաշտօնաթերթ, Հայր Սուրբի խմբագրութեամբ որոշ ժամանակ լոյս էր տեսնում ԳՐԱԶԱՐԿ ամսագիրը:

«Հայր Սուրբի Առաջնորդութեան շրջանին (1964 թ. Մայիսին) զուգադիպեցին Ատրպատականի Թեմի Պատգամաւորական

Ժողովի (ԺԳ. նստաշրջան) եւ ազգային նոր մարմինների ընտրություններ, հաշտ ու համերաշխ մթնոլորտում:

«Քահանայապետի պակասը լրացնելու նպատակով, 1964 թուին, Բէյրութից հրաւիրուել են երկու քահանաներ՝ Արժ. Տ. Բագրատ Քինյ. Մելքոնեանը, որ պաշտօնավարում էր Թաւրիզում (ուր եւ վախճանուեց) եւ Արժ. Տ. Վարդան Քինյ. Պոյաճեանը, որ շուրջ մէկ ու կէս տարի պաշտօնավարեց Մարաղայում եւ ապա վերադարձաւ Բէյրութ (ապա Թորոնթօ, ուր եւ վախճանուեց): 1965 թուին, հրաւիրուեց Արժ. Տ. Գալուստ Քինյ. Էքմէքճեանը (այժմ վախճանած), որ կարճ ժամանակից վերադարձաւ Հալէպ, իսկ 1964 թուին Բէյրութից հրաւիրուեց Պրն. Հրանդ Աճէմեանը՝ իբրեւ Թաւրիզի եկեղեցիների դպրապետ եւ մինչեւ 1968 շարունակել է իր պաշտօնավարությունը (ապա փոխադրուած Նոր Զուղա եւ Փարիզ):

«1965 թ. Մայիսին հիմնուել է Թաւրիզի Ս. Սարգիս Եկեղեցու Կիրակնօրեայ Դպրոցը, որի դասընթացքներին հետեւում են 260 աշակերտ-աշակերտուհիներ: Պաշտօնավարում են Արժ. Տ. Բագրատ Քինյ. Մելքոնեանը, տիրուհի Սեդա Մելքոնեանը եւ Պրն. Յարութիւն Յովսէփեանը (մահացած 1973 Օգոստոսին):

«Հայր Սուրբը իր մշտական ներկայութեամբ եւ աջակցութեամբ, բանիւ եւ գործով, քաջալերում է թեմի եկեղեցական, կրթական ու մշակութային ձեռնարկները, կապ է պահում Իրանի տարբեր շրջաններում եւ արտասահմանում գտնուող ատրպատական-ցիների, Իրանահայ Հայրենակցական միությունների (Նիւ Եորք եւ Լոս Անճելոս, ԱՄՆ), բարեսիրական եւ կրթական հիմարկությունների հետ, ճիգ թափելով ապահովելու նրանց բարոյական եւ նիւթական աջակցությունը՝ ի նպաստ Ատրպատականի Թեմի:

«Տալով այս խրախուսական տեղեկությունները փառաւոր անցեալի տէր Ատրպատականի Թեմում ազգային-եկեղեցական եւ կրթական կեանքը բարոյ պայմանների մէջ դնելու համար կատարուած գնահատելի աշխատանքների մասին, յոյս ունենք, որ մասամբ գոհացրած կը լինենք Ատրպատականից հեռու գտնուող մեր հայրենակիցների հետաքրքրությունը:

«Մեր սիրելի ծննդավայրից հեռու գտնուող ատրպատական-ցիներիս սեպուհ պարտականութիւնը թող լինի նեցուկ հանդիսանալ Գեր. Առաջնորդ Հայր Սուրբին եւ տեղի ազգային մարմիններին, որոնք նուիրուած են մեր լուսոյ տաճարների, հոյակապ վանքերի ու եկեղեցիների եւ մեր սրտին ու հոգու այնքան քաղցրօրէն խօսող թանկագին յիշատակարանների պահպանման գործին...:»

(Տե՛ս՝ «Գիւան Ատրպատականի Հայոց Պատմութեան», Ա. հատոր, 1966, էջ 252-259):

1966-էն ետք շարունակուեցան շինարարական աշխատանքները: Թեմական Խորհուրդի որոշումով քանդուեցաւ 1915-ին կառուցուած Ղալալի Արամեան Թատերասրահը՝ Տ. Բագրատ քահանայի եւ Պրն. Համօ Վարդանեանի միջոցաւ:

1967 Հոկտ. 27-ին բացուեց կատարուեցաւ՝ Ղալալի Ա. Աստուածածին Մայր Եկեղեցւոյ կից կառուցուած շէնքի գետնայարկին մէջ՝ ՄԵԼԻԲ-ԹԱՆԳԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ, ուր հաւաքուեցան Հայր Վարդանի միջոցով Թաւրիպէն ու շրջաններէն հաւաքուած հայերէն ձեռագիրները, Գորոյեան Արշակ Խանի կրտակի թօղոնը (պարսկերէն ֆերմաններ, հրամանագիրներ, պարսկերէն ձեռագիրներ, շինական յախճապակեայ անօթներ եւ հին տեսակի զէնքեր), եկեղեցական սպասներ եւ այլ թանկարժէք առարկաներ: Սոյն թանգարանին բացուեց կատարեց Արեւելեան Ատրպատականի նահանգապետ ճարտ. Պրն. Թաղի Սարլաքը:

Սալմաստի Հաֆթվան գիւղի ազգային գրադարանը ամբողջութեամբ փոխադրուեցաւ Թաւրիպ եւ միացուեցաւ Հ.Յ.Գ. «Ռոստոմ Գաւաթ» Գրադարանին (այժմ՝ Մատենադարան): Սոյն գրադարանը գետեղուած է Ազգային Առաջնորդարանի Ա. եւ Բ. յարկի սրահներուն մէջ, արտօնութեամբ Թեմական Խորհուրդին: Դիմում կատարուած ըլլալով Իրանեան Քարիւղի Ազգային Ընկերութեան Ընդհանուր Տնօրէն Դոկտ. Մանուշէհրէ Էղբալին, Հայր Վարդանն ու պատգամաւոր Դոկտ. Գագիկ Յարութիւնեան, անձամբ այցելեցին Պրն. Ընդհ. Տնօրէնի Թեհրանի գրասենեակը եւ ապահովեցին 50.000 թումանի աջակցութիւն մը, որ Թեմական Խորհուրդին կարգադրութեամբ բաժնուեցաւ Ատրպատականի ազգային Մարմիններուն եւ դպրոցներու հոգաբարձութիւններուն, ինչպէս նաեւ կառօտեալ ընտանիքներուն:

Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական բաժնի քարտուղարներէն Պրն. Վահրամ Մավեանի եւ քանի մը ժողովականներու հետ, Հայր Սուրբը 1967-ի Դեկտեմբերի ցուրտ օրերուն, այցելեց Ուրմիոյ հայաբնակ քանի մը գիւղերը եւ տեղւոյն ազգային վարժարաններուն անձուկ վիճակին իրազեկ պահելէ ետք Պրն. Մավեանը, ապահովեց Գ. Կիւլպէնկեան Հիմնարկութեան նիւթական մշտական աջակցութիւնները՝ Ատրպատականի գրեթէ բոլոր ազգային վարժարաններուն:

Իրանի նախկին Ֆարահ Փահլավի կայսրուհին իր շքախումբով 9 Օգոստոս 1968-ին այցելեց Արևմտեան Ատրպատականի կեդրոն Ուրմիայ քաղաքը, եւ ապա 11 Օգոստոսին ալ Շահփուր: Երկու առիթներուն ալ Հայր Վարդան Նորին Կայսերական Բարձրութեան ներկայացուց Ատրպատականի Հայոց ջերմ երախտագիտութիւնն ու հաւատարմութիւնը՝ Արքայական Ամոլին նկատմամբ եւ տեղեկութիւններ տուաւ Թեմի Արտապի Ս. Թադէի եւ Նախավկայ Ս. Ստեփաննոսի վանքերու մասին, ինչ որ խոր գոհունակութիւն պատճառեց Կայսրուհիին:

Հայր Սուրբը հարիւրաւոր յօդուածներով աշխատակցեցաւ Թեհրանի ԱԼԻԲ օրաթերթին եւ ներկայ գտնուեցաւ ազգային բոլոր հանդիսութիւններուն: Իր օրով է որ արաբագէտ Պրն. Ալի Ասդարիի միջոցով վերծանուեցան պարսիկ թագաւորներու կողմէ հայոց ի նպաստ տրուած ֆերմանները:

Ի վարձատրութիւն այս բոլոր աշխատանքներուն, Թեմի Պատգամաւորական Ժողովը, առանց Վեհափառ Հայրապետի գիտութեան եւ Առաջնորդ Հայր Սուրբի ներկայութեան, 1968-ի Նոյեմբեր 22-ի նիստին, դատապարտելի որոշում մը առաւ Հայր Սուրբի մասին: Սոյն որոշումը տրուած էր ի հետեւանս Թեմական Խորհուրդի քարտուղար Էմիլ Յակոբեանին հետ Հայր Սուրբին ունեցած մէկ վիճաբանութեան, որ հաճելի չթուեցաւ ազգային կալուածները ըստ կամս օգտագործող քանի մը Ժողովական անհատներուն համար:

Հակառակ Պատգամաւորական Ժողովի վճիռին, Վեհափառ Հայրապետին իսկ հրամանով, Հայր Վարդան Թաւրիպ մնաց ու պաշտօնավարեց մինչեւ 1969-ի Յունուար 10-ը, ապա փոխադրուեցաւ Թեհրան եւ Անթիլիաս Ժամանեց Փետրուար 14-ին: Ներկայանալով Ազգային Կեդրոնական Վարչութեան նիստին, Հայր Սուրբը մանրամասնօրէն զեկոյց տուաւ այն տարակարծութիւններու մասին որոնք բոյն էին դրած Թեմական Խորհուրդի անդամներուն եւ Ժողովուրդին միջեւ, (որ իր շուրջ 200-ի հասնող համախօսականի վրայ կատարուած ստորագրութիւններով, Վեհափառէն խնդրած էր Հայր Վարդանին պաշտօնավարութեան շարունակումը), ինչպէս նաեւ այն հակասահմանադրական որոշումները՝ որոնք կիրարկուած էին պատկան Մարմիններուն կողմէ՝ Արաջնորդական կնիքի գրաւումով եւ կարգ մը իրաւասութիւններու իւրացումով: Թեմը այնուհետեւ շուրջ չորս տարիներ պիտի մնար առանց Առաջնորդի:

ARMENIAN PRELACY OF AZERBAIJAN, TABRIZ

After the departure of the Prelate Reverend Father Arsen Avedikian from the historic Prelacy of Azerbaijan in Tabriz, on 13 August 1963 the local Church Council unanimously selected Father Vartan Demirdjian as his successor, which subsequently was approved by Vehapar Khoren I.

Arriving in Tabriz on 12 September 1963, Father Vartan paid formal introduction visits to the Iranian officials of Azerbaijan (Iran) and the various Armenian communities of the Prelacy, and performed his first Holy Mass on 15 September.

On 13 June 1965, upon the recommendation of the Prelacy Church Council, he was bestowed the rank of Very Reverend (Supreme) Vartabed by Khoren I.

Հոգեւոյս Արքեպիսկոպոս Կիլիկիոյ Պատմական Աթոռի հոգեւորականաց դասուն մէջ իւրայայտուկ տեղ մը կը գրաւէր շնորհիւ իր հոգեւոր պատրաստութեան, ընկերային նկարագրին, հոգեւոր-գրական վաստակին եւ բազմաթիւ այլ ձիրքերուն, որոնք ամբողջութեամբ նուիրաբերեց ի նպաստ Հայց. Եկեղեցւոյ եւ Հայ Ժողովուրդին:


Գերշ. Տ. Վարդան Արքեպիսկոպոս Տէմիրճեանի անժամանակ վախճանման տիտղոս առիթով, անձամբ եւ յանուն Հայց. Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի Հոգեւորականութեան, Թեմական Խորհուրդին եւ համայն հաւատացեալներուն, մեր խորին վշտակցութիւնները կը յայտնենք Ձերդ Սուրբ Օծութեան եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միաբանութեան:

Կիրակի, Սեպտ. 19-ին, 2004, Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ Հոգեհանգստեան Մասնաւոր Պաշտօն պիտի կատարուի Հոգեւոյս Տ. Վարդան Արքեպ. Տէմիրճեանի բարի եւ ծառայատէր հոգիի խաղաղութեան համար:

Կաղօթենք Բարձրեալն Աստուծոյ, որ իր Երկնային Լոյսերուն մէջ հանգնեցնէ Հայց. Եկեղեցւոյ Բարձրաստիճան Հոգեւորականի հոգին եւ թող Սուրբ Հոգին մխիթարէ մեզ՝ բոլորս:

Ձեպի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կը մաղթենք համբերութիւն, քաջամոռոցութիւն եւ արեւշատութիւն:

Որդիական ականածանօք մարչիմ ի համբոյր Ձերդ Վեհափառութեան Օծեալ Սուրբ Աջոյն՝


ՅՈՒՆԱՆ ԱՐԽԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

3325 NORTH GLENOAKS BLVD. • BURBANK, CA 91504
TEL: 818.558.7474 • FAX: 818.558.7474 • EMAIL: ARMENIANCHWD@EARTHLINK.NET • WWW.ARMENIANCHURCHWD.COM

*Letter of condolences by H.E. Archbishop Hovnan Derderian, Primate of
the Western Diocese of the Armenian Church of North America,
to H.H. Aram I, Catholicos of Cilicia*

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆԸ ԵՒ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆԸ
ՎԱՐԴԱՆ ԱՐԶԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՄԻՐՃԵԱՆԻ ԱԶԳԱԿԱՆՆԵՐԻՆ ԵՒ ԲՈԼՈՐ
ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻՆ

Անթիլիաս, Լիբանան

Անհուն վշտով առայ սիրելի բարեկամիս՝ անուգական հոգեւորական եւ մտաւորական, իր գործին եւ իր կողքը գտնուող մարդկանց անմնացորդ եւ ըստ ամենայնի նուիրուել կարողացող ՎԱՐԴԱՆ ԱՐԶԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՄԻՐՃԵԱՆԻ անժամանակ, անսպասելի եւ յանկարծական մահուան գոյժը: Անհաւատալի է, որ Վարդան Սրբազանիս հետ այլեւս գիտական խնդիրներ չենք քննարկելու եւ գրքերի կապոցներ չենք փոխանակելու, առաւել անհաւատալի է, որ միասին ծրագրած եւ սկսած մի շատ կարեւոր գիտական երկասիրութիւն շարունակելու եմ միայնակ եւ պատմագիտական մեծ կարեւորութիւն ունեցող այդ սկզբնաղբիւրի հրատարակութիւնը սրտի մեծ կսկիծով ձօնեմ նրա յար վառվռուն յիշատակին:

Ընդունեցէ՛ք խորին ցաւակցութիւններս եւ անկեղծ մաղթանքս, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, որով նաեւ՝ հայկական մեր հասարակութիւնը, հնարաւոր չափով շուտ կարողանայ արժանաւոր մարդկանցով լրացնելու այն մեծ բացը, որ իր ետեւից թողեց Վարդան Արքեպիսկոպոս Տեմիրճեանը:

Յիշատակն արդարոյ օրհնութեամբ եղիցի:

ԳԵՈՐԳ ՏԵՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ
Երեւանի Մաշտոցեան Մատենադարանի
Ձեռագրագիրութեան բաժնի վարիչ, Գլխաւոր աւանդապահ

10 Սեպտեմբերի 2004 թ.
Վենետիկ, Սուրբ Ղազար

*Letter of condolences by Kevork Der-Vartanian, Head of the Department of
Manuscriptography at the Mashtots Library (Madenataran) of Yerevan,
to the relatives and friends of the late Archbishop*

Լ. Պ. ՄԻՆԱՍՅԱՆ
LEON MINASSIAN
No 187 str. N 351
Ֆիլմ - Վիդեո, ՎԵՐՈՎՆԵ
Tell. (031) 459756
N
Fax No 145 20... Սեպտեմբեր, 04

لئون میناسیان
علیان نقر شماره ۳۵۲
چلچا - اصفهان - ایران
تلفن (۰۳۱) ۴۵۹۷۵۶
شماره
فکس ۱۴

Ն.Ս.Օժոնթիւն

Տ.Տ. ԱՐԱՄ Ա.

Ապրող ոկոյ Մեծի Տանն Կիլիկիոյ

Անթիլիաս

Վերազատ Տէր


Խորը ցաւով և անհուն վշտով լսեցինք Ապրողի -
կոսւթեանդ վաստակաւոր և անխոնջ միաբան Տ.ՎԱՐԴԱՆ Արք. Դե
միրժեանի անակնկալ ու անսպասելի մահւան զոյժը:

Այսու մեր խորին վշտակցութիւնն ենք յայտնում Ձերդ Արքե
թեան և միաբանութեան բոլոր հայրերին, մողթելով Աբ. Հոգու
մխիթարութիւն և համբերութիւն, իրեն նրկնային որբայութիւն:

Երանաշնորհ Արքեպանք մեծ ծառայութիւն ունի մատուցած
մեր զրականութեան և իրեն յիշատակը միշտ կ'ընայ անջինջ: Նա
նաև իմ մօտիկ բարեկամն էր և միշտ սիրով կապւած ինձ հետ:

Մնամ Արդի: Կան ջեղմ սիրտ

և վշտակից՝


Լեւոն Մինասեան

| | |
|--------------------------------------|------------------|
| ԿԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԼԱՅՈՑ ՄԵՏԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ | |
| Կարգաթիւ. 468/04... | Ժամանակ 2/10/04. |
| Քգժամրայի թիւ. 31/77 | Գաղտնիութեան... |
| Բնակարանի թիւ. | Ծրարկաց |
| | Բնակարանի... |

Letter of condolences by Mr. Levon Minassian of Julfa, Isfahan,
to H.H. Aram I, Catholicos of Cilicia



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

133-32

9 Սեպտեմբեր 2004

Ն.Ս.Օ.Տ.Տ.

Արամ Ա. Կաթողիկոս

Մեծի Տանն Կիլիկիոյ

Ամբիլիաս, Լիբանան

| | |
|---|------------------------|
| ԿԱՌԱՐԱՆԱՅԻՆ ԴԱՏԱՆԻ ԶԱՅՈՑ ՄԵՄԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ | |
| Կարգավիճակ... 4.10.04 | Ժամանակ... 10.09.04... |
| Բողոքարկի թիվ... 37/04 | Պատասխանում... |
| Ստացաճի թիվ... | Թույլատրվում... |

Վեհափառ Տէր,

Խոր ցաւով իմացանք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մեր միաբանակից երէց եղբայրներէն Տ. Վարդան Արք. Տէմիրնեանի վախճանման գոյժը, որ սուգի մատնեց մեզ:

Սրբազան Հօր վախճանումով, Կիլիկիան Ա. Աթոռի մեր միաբանութիւնը ահաւաչիկ ծանր կորուստ մը եւս կ'ունենայ կարճ ժամանակամիջոցի մը մէջ: Ան իր ետին կը թողու վաստակ մը, որ հարուստ է: Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ ու Մեծի Տանն Կիլիկիոյ Ա. Աթոռի առաքելութեան նուիրում կեանքի մը ծառայութիւններով, ինչպէս նաեւ ուսումնասիրական-մտաւորական աշխատանքներ ամփոփող հատորներով:

Յանուն Թեմիս մէջ ծառայող միաբան հայրերուն, Կրօնական Ժողովին, Ազգային Վարչութեան եւ անձնապէս, այսու մեր ցաւակցութիւնը կը յայտնենք Ձերդ Սրբութեան ու միաբանութեան անդամներուն:

Այս Կիրակի, 12 Սեպտեմբերին, «Տէր Ռդորման»ի պահում պիտի յիշենք վախճանեալ Սրբազան Հայրը, իսկ յառաջիկայ Կիրակի, 19 Սեպտեմբերին, հոգեհամզատեան պաշտօն պիտի կատարենք իր հոգւոյն համար, խնդրելով ամենաբարին Աստուծմէ, որ անոր պարգեւէ երկնային յաւիտեան կամ հանգիստ:

Մատչելով ի համրոյդ Ձեր օժեալ Ա. Աջոյն,

Խոնարհաբար՝

Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Առաջնորդ
Ա. Մ. Նահանգներու Արեւմտեան Թեմ

6252 HONOLULU AVENUE, #100, LA CRESCENTA, CA 91214 • TEL: (818) 248-7737/38, FAX: (818) 248-7745, E-MAIL: PRELACY@AOL.COM

*Letter of condolences by H.E. Archbishop Mushegh Mardirossian, Prelate of the
Western Prelacy of the Armenian Apostolic Church of America,
to H.H. Aram I, Catholicos of Cilicia*



ԱՊՍՏՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՅ ՔԵՐԻՈՅ ԹԵՄԻ

Հալեպ 10 Սեպտ. 2004

Ն.Ս.Օ.Տ.Տ.
ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵՄԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԱՆԹԻԿԻԱՍ

| | |
|---|-------------------|
| ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՅ ՄԵՄԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ | |
| Կարգաթիվ... 419/04 | Ժամանակ... .. |
| Թղթածրարի թիվ... 31/14 | Կատարական... .. |
| Մասնագրի թիվ... .. | Թույլատրված... .. |

Վեհափառ Հայրապետ,

Սրտի խոր կսկիծով իմացանք Մեծի Տանն Կիլիկիոյ
Կաթողիկոսութեան մէջ երէց միաբաններէն Գերշ. Տ.Վարդան Ա. Արք.
Տէմիրնեանի վախճանման գոյժը:

Յանուն Բերիոյ Թեմի հոգեւորականաց դասին,
Ազգային վարչութեան եւ համայն ժողովուրդին կը յայտնենք մեր
վշտակցութիւնը:

Կաղօթենք որ Աստուած անսասան պահէ Հայաստան-
եաց Առաքելական սուրբ եկեղեցին, Մեծի Տանն Կիլիկիոյ
Կաթողիկոսութիւնը եւ Միաբանութիւնը:

Մատչիմ ի համրոյ՝ Զերդ Ա.Աջոյն

Որդիաբար՝

ՇԱՀԱՆ Օ.ՎԴ.ՍԱՐԿԻՍՅԱՆ
ՄԵՄԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

*Letter of condolences by the Very Reverend Supreme Father Shahan Sarkissian,
Prelate of the Armenian Prelacy of Peria, Aleppo, to H.H. Aram I, Catholicos of Cilicia*



Allgemeiner Armenischer Wohltätigkeitsverein
ZWEIG ÖSTERREICH

Armenian General Benevolent Union
AUSTRIA CHAPTER

ԱՐՄԵՆԱԿԱՆ ԲԵՆԵՎՈԼԵՆՏԿԱՆ ԲՆԴԱՄԱՐԱՅԻՆ ՄԵՐՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Աստրիոյ Մասնաճիւղ

Վիեննա, 28 Սեպտեմբեր 2004

Յարգելի Պաղտոյեան Ընտանիք,
Սիրելի Շողիկ եւ Սեպուհ,

Կենքի դառն եւ դաժան պահերէն մէկն է ունենալ շատ սիրելի եւ մօտ
ազգականի մը անակնկալ եւ անսպասելի կորուստը: Սրտի անհուն կսկիծով
իմացանք, բոլորիս սիրելի, ազգանուէր, հայութեան համար զոհուած եւ
անսահման նուիրուած, Սրբազան հօր, Արքեպս. Վարդան Տեմիրճեանի
վախճանման ջառագի գոյժը:

Սրբազան Հայր, ժողովուրդէն ծնած, ըլլալով Կիլիկեան Միաբանութեան
երկար տարիներու բարձր հոգեւորական անդամ, ունենալով տարիներու գրական
բազմավաստակ գործունէութիւն, մնացած էր միշտ իր ժողովուրդին պիտանի,
գործոն բազմ համեստ զաւակը: Այս տխուր առիթով, Հ.Բ.Ը.Միութեան
Վիեննայի Մասնաճիւղի Վարչական կազմը իր խորազգայ վշտակցութիւնները
եւ ցաւակցութիւնները կը յայտնէ Պաղտոյեան Ընտանիքին, վախճանեալի
համայն ազգականաց եւ բարեկամներուն Լիբանան եւ աշխարհատարած:

Յաւերժ սէր ու յարգանք իր անթառամ յիշատակին:

Յարգանք՝

Հ.Բ.Ը.Միութեան Վիեննայի
Մասնաճիւղ

Ատենապետուհի

Թամարա Պապայեան-Բոհճալեան

Ատենադպրուհի

Մարալ Կիւրացոսեան

TEL. 718 5230 - POSTFACH 272, A-1011 WIEN - KOLONITZGASSE 11/13, A-1030 WIEN

Bank: P.S.K. Kontonummer 1148600 BLZ 60000

e-mail: aeub.austria@mail.com

*Letter of condolences by Mrs. Tamara Babayan-Bohdjalian (Chairperson) and
Mrs. Maral Guiragossian (Secretary) of the Austrian Chapter of the Armenian
General Benevolent Union to Mr. & Mrs. Sebouh and Shoghig Baghdoyan*

| | | |
|--|---|-----------------------------------|
| <p>PRELACY OF THE ARMENIAN
APOSTOLIC CHURCH</p> <p>THE HASHEMITE KINGDOM OF
JORDAN</p> <p>AMM: 11 P.O. BOX 180 TEL. 775261</p> |  <p>ܩܠܝܬܐ ܕܠܥܡܝܬܐ ܕܡܪܝܬܐ ܕܝܪܕܢ</p> | <p>ܩܠܝܬܐ ܕܠܥܡܝܬܐ ܕܡܪܝܬܐ ܕܝܪܕܢ</p> |
|--|---|-----------------------------------|

| | |
|---|-------------------|
| ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻՎԻՌՈՑ | |
| Կարգավիճակ... 424/04 | Ժամանակ... .. |
| Բողոքարկի Բիւ. 31/4/ | Գաղափարաբան... .. |
| Պատգամի Բիւ. | Բողոքարկ... .. |
| Վ. Մ. | Բողոքարկ... .. |

11-Սեպտեմբեր-2004
Ամսաթիվ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԳՈՒԹԻՒՆ,
Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻՎԻՌՈՑ
ԱՆԹԻՈՒՍՍ


Վեհափառ Տէր,

Այսօր Հայկական հեռատեսիլէն իմ փշտով տեղեկացանք մեր Լիւբլյուկայի Առաքել Տէր Վարդան Նպտ. Տէրերնեան մահուան լուրը: Վարդան եպիսկոպոսը մեր յիշատակներու մէջ կը մնայ իբրեւ տղայի ու քարի հովիտ: Ամ ամուրսմալի մերդրում ունիմ հայ հոգեւոր կեանքէն մերս: Սրբազանի բացակայութիւնը իր հօտն ու մտերիմները միշտ պիտի գգան:

Թող քարեգութ Տէրը իր լոյսերում մէջ հանգչեցնէ մեր սիրելի եղբոր հոգին:

Վշտակից՝

ՎԱՀԱՆ ԱՐԲԵՊՍ. ԹՕԹԱՆԵԱՆ



Ամսաթիվ Հայոց Նոյեմբեր 11 Գաղափարաբան Փոխանորդ

*Letter of condolences by H.E. Archbishop Vahan Topalian, Patriarchal Legate and
Prelate of the Prelacy of the Armenian Apostolic Church of Jordan,
to H.H. Aram I, Catholicos of Cilicia*

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ՉԱՅՆ

VOICE OF NOR SERGUNT

Լոնտոն, 10 Սեպտեմբեր, 2004

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ,

Անթիպաս-Լիբանան

Վեհափառ Տէր,

Խորունկ ցաւով ստացանք Ձեր եւ Ա. Աբաղիոյ Միաբանութեան կողմէ խմբագրութեան առաքուած մահազոյր, որը կը գտնուի Տանն Կիլիկիոյ վատականաշատ միաբարաններէն Տ. Վարդան Ա. Արք. Տեմիրճեանի վախճանումը:


Վախճանեալ Արքագան Հօր՝ Հայ Առաքելական Եկեղեցւոյ համդէպ ունեցած նուիրումը, հաւատքը, ինքնա ճանաչման անոր աշխատակիցները մեծապէս տպաւորած էր մեզ բոլորս: Մենք պարբերաբար՝ մամակներերով եւ հետաձայներով կապի մէջ էինք Վարդան Արքագանին հետ: «Նոր Սերունդի Չայն»-ի մէջ լոյս ընծայեցինք վախճանեալ քարճրաստիճան հոգեւորականի 5 Յուլիս 2004 թուակիր մամակը՝ ռադիօաւ խմբագրութեան ուր կան դաւաճանքի ջերմ խօսքեր մեր աճապարի անմահականութիւն համդէպ: Յետադի է, որ դաժան իրականութեան պատճառով կեանքանի կապը յետ այստ դադարած է վախճանեալի եւ մեր միջեւ, սակայն անոր յիշատակը վառ պիտի մնայ զինքն ճանաչողներու սրտերուն մէջ:

Խմբագրութիւն կը պատրաստուի «Նոր Սերունդի Չայն»-ի յառաջիկայ քիւն մէջ պատշաճ կերպով անդրադառնալ վախճանեալ Տ. Վարդան Ա. Արք. Տեմիրճեանի կենսագրութեան:

Վեհափառ Տէր, ընդունեցէք մեր զգացում ցաւակցութիւնները:

Շարունակեցէք Ձեր հօտը հովուել, որպէս քաջ Հովիւ:


Խմբագիր՝



ՄԼՈՒՒՄ ԿԿԱՄԵՐՆ

«Նոր Սերունդի Չայն»-ի

Պատասխանատու Տնօրէն՝



ԵՂԻՍ ԵՂԻՍԵՅԻԱՆ

| | |
|--|------------------|
| ԿԱԹՈՒԼԻԿՈՍԻՒՄԻՆ ԶԱՅՆԻՆ ՄԵՐԻՑ ՏԵՐԵՆ ԳԵՂԵՂԻՑ | |
| Կարգաթիւ... 433/04 | ժամանակ... .. |
| Քղնաճարի թիւ... 37/11 | Գաղափարներ... .. |
| Ստացողի թիւ... .. | Թուական... .. |
| | Թուամաս... .. |

1 Marsh Road, Wembley, middx. HA0 1ES
tel: 020 8997 1200 fax: 020 8997 0900 e-mail: norserount@stephen-y.com

Letter of condolences by Messrs. Yeghia Yeghiazarian (Executive Director and cousin of the late Archbishop) and Manuel Atamian (Editor-in-chief) of the Voice of Nor Serount Periodical in London to H.H. Aram I, Catholicos of Cilicia



UNIVERSITA'
CA' FOSCARI
DI VENEZIA

DIPARTIMENTO DI STUDI EUROASIATICI

S. POLO 2035 - 30125 VENEZIA
TEL. 041.5287220-041.5287687 - FAX 041.5241847

LINGUA E LETTERATURA ARMENA

| | |
|--|--------------------|
| ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ԷԱՅՈՑ ՄԵՐԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ | |
| Կարգաթիվ..... 450/04 | Ժամանակ 27/10/2004 |
| ՔղՔաճարի թիվ..... 27/11 | Դատախառնում..... |
| Ստացարկի թիվ..... | Թույլատրվում..... |

Venezia, 27 Սեպտեմբեր 2004

ԱՌ Ն.Ս.Օ.Տ.Տ.

Արամ Ա.

Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ

Ա ճ թ ի Լ ի ա ս

Վեհափառ Տէր,

Մեծ կորուստ մը եւս հարուածեց Հայաստանեայց պանդոկստ Եկեղիմ, Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետական Սիաքանութեան և առ հասարակ հայ հոգեւորականութեան շարքերը՝ Վարդան Սրբգ. Տեմիրճեանի անդարձ մեկնումով դէպի յախտնութիւն:

Ընդունեցէք ներկայով իմ հոգեհարազատ խորին ցաւակցութիւնը՝ Ձերոյ Վեհափառ Տէրութեան, և յանձին Ձեր՝ Մեծի Տանն Կիլիկիոյ համայն Նուիրապետութեան և աստուածադիր Ուխտին ի գոյժ Վարդան Սրբազանի այս տարածած մեկնումին, որու իրազեկ եղայ դառն կսկիծով:

Հանգուցեալին հետ անձամբ ծանօթանալու պատիւն ունեցեր էի և հոգեւոր շինութեանը նկատելի էի իր մէջ նուիրեալ, մտաւորական, հմուտ և համեստ հոգեւորականի կերպարը:

Ընդ արդարսն հանգուցէ՛ զնա Տէր ի լոյս երեսաց իւրոց և փառօք իւրովը պսակեցէ՛ զնա:

Ցաւակցական այս զգացումներուս կը միացնեմ իմ աղօթքը և հոգեւոր ժողովանքը՝ որպէսզի Տէրը նոր մշակներով լրացնէ թերին իր այգիին մէջ նուազող ծառաներուն, պարգեւելով յատկապէս Մեծի Տանն Կիլիկիոյ Սուրբ Ուխտին թարմ ու վարար կոչումներ՝ արժանապէս փոխարինելու և բազմացնելու շարքերը անդարձ մեկնողներուն:

Հարազատ ու քերմ զգացումներով և խոնարհ մեծարանքով ի Տէր, մնամ Ձերոյ Վեհափառ Տէրութեան

Հ. Լեւոն Վրդ. Ձեքեան

Letter of condolences by the Reverend Father Levon Zekian of the Desk of Armenian Language and Literature at the Department of Euroasiatic Studies of the University of Venice to H.H. Aram I, Catholicos of Cilicia



*Յուդարկաւորութիւն եւ թաղման կարգ, նախագահութեամբ Արամ Ա.
Վեհափառ Հայրապետին, Անթիլիաս, 11 Սեպտեմբեր 2004*
*Funeral and wake services, presided by His Holiness Catholicos Aram I,
Antilias, 11 September 2004*



*Յուզարկաւորութիւն եւ թաղման կարգ, նախագահութեամբ Արամ Ա.
Վեհափառ Հայրապետին, Անթիլիաս, 11 Սեպտեմբեր 2004*
*Funeral and wake services, presided by His Holiness Catholicos Aram I,
Antilias, 11 September 2004*

ԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿ

1. «Յուրյակ Չեռագրաց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան», անտիպ: «Վարդապետական Աւարտաճառ՝ 1957-1960, 1967»: Կարգ մը ձեռագիրներու մասին տեղեկութիւններ տրուած են «ՀԱՄԿ» ամսագրին մէջ: Էջք՝ 280 («ՀԱՄԿ», 1960, Յունուար, Ա. Կողք):

2. «Օրագիր Անդրէաս եւ Թաթէոս Արքեպիսկոպոսայ» եւ «Պատմութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Գպրեվանոց՝ 1930-1960», 1960, Պէյրութ, Տպ. Մշակ: Էջ 185 («ՀԱՄԿ» 1960, Օգոստոս-Սեպտեմբեր, էջ 229): Այս երկասիրութիւնները արժանացած են Կ. Պոլսոյ Ամեն. Տ. Շնորհք Ս. Արք. Գալուստեան Պատրիարքի եւ հոգեւոր Տ. Ղեւոնդ Ս. Արք.ի գնահատանքներուն: Այս առթիւ իր գրախօսականին մէջ Բիւզանդ Եղիայեան, հետեւեալը կը գրէր.

«Վարդան Վրդ. Տէմիրճեան՝ Մատենադարանապետ Անթիլիասի Գպրեվանքի՝ վերջին տարիներուն, ՀԱՄԿ-ի էջերով ինքզինք յայտնեց որպէս համբերատար քննող մը բանասիրական նիւթերու: Իր հրատարակած գրութիւնները միայն հաւաքողական ու նկարագրական աշխատանքներ ըլլալէ աւելի՝ կը բովանդակեն համադրութիւններ, սովորաբար անկենդան ընդունուած նիւթերը դարձնելով հետաքրքրական եւ արդիական տեսակէտներու, կիրարկելի ժամանակակից հարցերու մէջ....: Շատ կանոնաւոր աշխատանք մը կը ներկայացնէ Անթիլիասի Գպրեվանքի մասին կատարուած ուսումնասիրութիւնը...»:

Գրախօսականներ գրած են նաեւ Հրայր Սրկ. Աշճեան (ապա Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս) - ԳԼԱՉՈՐ Պարբերաթերթ Կիլիկեան Ս. Աթոռի Գպրեվանքին, 1960, Գ. Տարի, Թիւ Գ., էջ 70-73), եւ Հայր Յովհաննէս Վրդ. Մըսրըլեան (Հանդէս Ամսօրեայ, Վիեննա, 1961, 75-րդ Տարի, սիւնակ 965-968):

3. «Յուրյակ Չեռագրաց Ղալաթիոյ Ապգային Մատենադարանի Հայոց»: Երան. Տ. Բաբգէն Աթոռակից Կաթողիկոս Կիլիկեանի (1868-1936) կազմած հատորին լրացուցիչ գլուխները (անձնանուններու, տեղանուններու, ժամանակագրական եւ բովանդակութեան ցուցակները): 1961, Տպ. Անթիլիաս:

Գրքին Յառաջաբանին մէջ, Երան. Տ. Զարեհ Ա. Կաթողիկոս Փայասլեան (14 Փետրուար 1961 թ.) դրուատիքով անդրադարձած է Հայր Սուրբին աշխատակցութեան եւ սրբագրութեան աշխատանքներուն մասին, զորս կատարած էր Տ. Զարեհ Ա. Կաթողիկոսի հետ:

Այս հատորին հրատարակության առթիւ Հայր Վարդանը արժանացած է Գ. Կիւլպէնկեան Հիմնադրութեան յատուկ գնահատանքին: Բանասէր Արշակ Ալպոյաճեանը Գահիրէի «ԱՐԵԻ» օրաթերթին մէջ այս մասին գրած է գրախօսական մը:

4. «Պատմութիւն Հայց. Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ», 1963, մեքենագրեալ դասանիւթ պատրաստուած Էշթէֆիէի Եփրեմեան Վարժարանի Ե. եւ Զ. կարգերու աշակերտութեան համար, եւ գործածուած մինչեւ Վարդան Վարդապետի մեկնումը Ատրպատական:

5. «Գիւան Ատրպատականի Հայոց Պատմութեան», Ա. Հատոր, 1966, Թեհրան, Նուրբաշի Տպարան: Էջք՝ 263: Բ. Հրատ. 1980, Տպ. Շիրակ, Պէյրութ: Էջք՝ 288:

Երեւանի Մաշտոցեան Մատենադարանի Տնօրէնի տեղակալ եւ բանասէր՝ Պրն. Բաբգէն Չուքասզեան, Հայր Վարդանին ուղղեալ իր 24 Հոկտեմբեր 1966 թուակիր եւ 17-173 թուահամար գրութեան մէջ, կը յայտնէր հետեւեալը. «Մաշտոցեան Մատենադարանի տնօրինութիւնը շնորհակալութեամբ ստացաւ Ձեր նախաձեռնութեամբ հրատարակուած «Գիւան Ատրպատականի Հայոց Պատմութեան» հետաքրքիր ժողովածուն: Հայ Սփիւռքում մեծ է բանասէր հայ հոգեւորականի դերը. ուստի ցանկանում եմ Ձեզ եռանդ ու կարողութիւն Հայ Մշակոյթի վարձպան քնազաւառում նորանոր աւանդներ մուծելու համար: Մեր ժողովուրդը կարիք ունի նուիրեալների. Դուք եւս եղէք դրանցից մէկը»:

ԳԻԻԱՆ-ի Ա. հատորի մասին գրախօսական մը լոյս տեսաւ ՀԱՄԳ-ի մէջ, Իրանահայ բանասէր Լեւոն Գ. Մինասեանի ստորագրութեամբ: (Տե՛ս՝ 1968, Յունուար, էջ 27):

6. «Ս. Վարդան Ալպոմ», 1967, Պէյրութ, Տպ. Միհրան եւ Ալպէն Գարտաշեան Եղբարք: Էջք՝ 24: Նկարագրական է այցելութեան մը, որ Սրբազան Հայրը կատարած էր մի քանի բարեկամներով, դէպի Խոյի Ս. Վարդանի կարծեցեալ գերեզմանը:

7. «Յուշամատեան Ներսէս Մելիք Թանգեան Արքեպիսկոպոսի», Հրատ. Ատրպատականի Հայոց Թեմական Խորհուրդի, Տպ. «Ալիք», Թեհրան, 1968: Էջք՝ 316: Ատրպատականի բազմադիւն Առաջնորդ՝ Տ. Ներսէս Արքեպս. Թանգեանի յօդուածները, վկայութիւններն եւ լուսանկարները հաւաքած ու խմբագրած է՝ ծննդեան 102 եւ մահուան 20-ամեակի առթիւ հրատարակելով:

8. «Մարտիրոս Արքեպս. Ուռոմանեցի, Տաղասաց», որուն մասին գրուած ուսումնասիրութիւնները նախապէս ՀԱՄԳ-ի մէջ լոյս քնծայուելէ ետք (1959-1962 եւ 1972-1973), առանձին հատորով եւ

նոր յաւելումներով լոյս տեսաւ 1974-ի Յունուարին, Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռի տպարանէն: Էջք՝ 189:

Այս առթիւ Արամ Վրդ. Քէշիշեան (Ապա Կաթողիկոս) ՀԱՄԿ-ի մէջ (1974, Յունուար-Փետրուար, էջ 64), հետեւեալը կը գրէր.

«Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միաբաններէն Գերպ. Տ. Վարդան Ծ. Վարդապետն է որ իմաստութիւնը ունեցաւ տքնաջան աշխատանքով լոյս ընծայելու եւ հանրութեան մատուցանելու ձեռագիրներու մէջ փակուած ժԸ. դարու այս եկեղեցականին հոգի-ին մրմունջները: Յոյժ գնահատելի է կատարուած աշխատանքը:»

Մինչ, իր 1 Փետրուար 1974-ի նամակով՝ Ս. Երուսաղէմի Հայոց Պատրիարք Տ. Եղիշէ Արքեպս. Տէրտէրեան հետեւեալ մտածումները կ'արտայայտէր Վարդան Վարդապետին.

«Բանասիրական, այսինքն ԲԱՆը սիրելու պրպտումներդ տակաւ կերպարանք եւ խորք կը ստանան մէջդ, վերբերելով մագաղաթներու երակներէն գանձերը մեր անցեալին եւ մշակոյթին: Մեծ իրագործումները համբերատար հաւատացեալներու ջանքերով է որ կը պտղաբերին, որոնք գիտեն ընելու իրենց սիրտը բաց սեղան մեռելներուն եւ ողջերուն՝ հաղորդուելու խորհուրդէն յաւերժական Հայութեան:

«Դուն գիտակ եւ վստահ ուժերուդ՝ կ'իրագործես ինքզինքդ կարելիին խորհուրդովը: Բացուած է բիբլդ իմաստուն մեր անցեալի գանձերուն՝ ձայնիդ հլու կ'արթննան մեր գրիչներն ու մտքի իշխանները, անգամ մը եւս Քեզմով յաւերժութեան երթալու:

Սրտագինս կը շնորհաւորեմ Քեզի, իբրեւ ազնիւ սուրբակ՝ անցեալի ծովէն վերբերելուն համար մեր մարգարիտները»:

Իսկ՝ ՀՍՍՀ Գիտութեան Ակադեմիայի Ակադեմիկոս Լեւոն Խաչիկեան, իր 19 Հոկտեմբեր 1976-ի գրութեամբ Հայր Սուրբին կը գրէր.- «Մաղթում եմ Ձեզ յաջողութիւններ Հայ Բանասիրութեան ասպարէզում: Տաղասաց Մարտիրոս Արքեպս. Ուռումանեցիի մասին գրած Ձեր հատորը գրաւական է այդպիսի նոր հրատարակութիւնների՝ ի շահ Հայ Մշակոյթի անյայտ էջերի լուսաբանութեան»:

9. «Դիւան Ատրպատականի Հայոց Պատմութեան», Բ. Հատոր, «Տեղեկագիր (Ատրպատականի) Առաջնորդական Գործունէութեան՝ 1963-1969», 1974, Ավակրավիւր եւ Տպ. Արապ, Պէյրութ: Էջք՝ 294:

Այս առթիւ Գերշ. Տ. Գարեգին Ս. Արքեպս. Սարգիսեան (ապա Կաթողիկոս Ամենայն Հայոց), Հայր Սուրբին ուղղած իր քաջալերական գրութեան մէջ ի միջի այլոց կը յայտնէր հետեւեալը.

«...Վստահ եմ որ ապագայ պատմաբանը «ԳԻԻԱՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» հատորներէն պիտի քաղէ կարեւոր մէկ մասը այն ատաղձին, որով պիտի գրուի Ատրպատականի Հայոց պատմութիւնը ամբողջական, համապարփակ, սիստեմատիկ պատկերացումով, որպէս հարուստ էջերէն մին Հայ Ժողովուրդի անցեալի եւ ներկայի կեանքի պատմագիրքին:Ուրախ եմ որ Ատրպատականի Հայոց պատմականօրէն այնքան հարուստ թեմը շնորհիւ Ձեր ուսումնասիրական ճիգերուն առաւել եւս կը ճանշ-ցուի Հայ կեանքին մէջ թեմի շրջանակէն դուրս, հայ Սփիւռքի այլ շրջաններու եւ կեդրոններու մէջ:

10. «Պատմագիրք Պօղոս եւ Մարի Նաճարեաններու», 1974, Տպ. Տօնիկեան, Պէյրութ: Էջք՝ 157:

11. «Գիւան Ատրպատականի Հայոց Պատմութեան», Գ. Հատոր, «Ցուցակ Ձեռագրաց Թաւրիզի Մելիք-Թանգեան Ազգային-Եկեղեցական Թանգարանի», 1977, Անթիլիաս: Էջք՝ 136: Միաժամանակ՝ «Ցուցակ Ատրպատականի Հայոց Թեմի Եկեղեցիների եւ Վանքերի» առանձնատիպը:

Այս առթիւ գրախօսական մը լոյս տեսաւ ԱԶԳԱԿ-ի մէջ, Աւստրիահայոց Առաջնորդ Մեսրոպ Ծ. Վրդ. Գ. Գրիգորեանի (Այժմ՝ Արքեպիսկոպոս) ստորագրութեամբ: (Տ՛ես՝ 1979, 5 Հոկտեմբեր):

12. «Գիւան Ատրպատականի Հայոց Պատմութեան», Գ. Հատոր, «Քարտէսներ Հայաստանի եւ Իրանի», «Տեղեկութիւններ Ատրպատականի Մասին, Զօդուածներ», 1977, Պէյրութ: Էջք՝ 109:

13. «Գաւազնագիրք Լիբանանի եւ Սուրիոյ Հայոց Թեմերու Առաջնորդութեան», Ա. Հատոր, 1980, Տպ. Ալթափրէս, Պէյրութ: Էջք՝ 510: ԳԱԻԱԶԱՆԱԳԻՐԲ-ը կամ Առաջնորդներու գործունէութիւնը, համախորհուրդ Սահմանադրական Ազգային Ժողովներու, մէկ երեսը կը կազմէ գաղութներու պատմութեան: Հետեւաբար, հատորը Լիբանանի եւ Սուրիոյ թեմերու հայ ժողովուրդի մասնակի պատմութիւնը կը ներկայացնէ, իրենց Ազգային-Եկեղեցական կարեւոր իրադարձութիւններով:

14. «ՎՇՏԱՄԱՏԵԱՆ»: Ատլաս Տպ., Պէյրութ, 1981: Էջք՝ 248: Խմբագրեց եւ հրատարակեց ֆրանսահայ մտաւորական Կարօ Մխիթարի (Մարտիրոս Թաճեան) այս հատորը, վերջինիս հիւանդութեան եւ տարիքի յառաջացման պատճառաւ:

15. «Ծաղկեփունջ Քարոզներու եւ Ուսումնասիրութիւններու (1957-1981)», Տպ. Տօնիկեան, Պէյրութ, 1981: Էջք՝ 448: Սրբազան Հօր զանազան ամսաթերթերու եւ օրաթերթերու մէջ վերոյիշեալ

Ժամանակաշրջանին հրատարակուած յօդուածները, ուսումնասիրութիւններն ու կարեւոր քարոզները, ներկայացուած են հինգ մասերով՝ համաձայն իրենց նիւթին եւ բովանդակութեան:

16. «Դիմաստուերներ, Ազգային Եկեղեցական Տիպարներ»: Տպ. Արազ, Պէյրութ, 1983: Էջք՝ 224: Հատորին մէջ կը ներկայացուին Հայ. Առաքելական Ս. Եկեղեցւոյ տիտան դէմքերու եւ ազգային ժողովականներու կենսագրութիւնները եւ անոնց յիշատակելի գործերը, վերբերելով յիշեալ վաստակաւորներուն նուիրեալ կեանքին գլխաւոր հանգրուանները եւ յաջողութիւնները:

17. «Լամբրոն Տարեգիրք, Ազգային Եկեղեցագիտական, Պատմաբանասիրական, վիճակագրական Ուսումնասիրութիւններ»: Ա. Հատոր, 1986, Պէյրութ, Տպ. Միհրան Գարտաշեան: Էջք՝ 256:

Այս առթիւ, «ԱԶԳԱԿ»-ի 6 Յուլիս 1988-ի թիւին մէջ, Ս.Պ.-ի ստորագրութեամբ լոյս տեսաւ գրախօսական մը, ուր հետեւեալը գրուած էր.

«ԼԱՄԲՐՈՆ տարեգիրքը նկատառելի տեղեկատու մըն է Հայաստանեայց Եկեղեցւոյ Նուիրապետական Աթոռներու եւ եկեղեցական ծանօթութիւններու շուրջ, գոնէ մեր հոգեւոր մշակոյթի մօտիկ անցեալին շուրջ, ինչ որ որոշ դիրքիւթիւններ պիտի ընծայէ Հայ Եկեղեցւոյ պատմութեամբ զբաղող ապագայ պատմաբանին:Շնորհաւորելի են Վարդան Եպս. Տէմիրճեանի յարատեւ ճիգն ու պրպտումները, որոնք կենդանի կը պահեն սէրը՝ հանդէպ մեր հնամենի սրբութիւններուն, եւ հետաքրքրութիւն կը ստեղծեն նոր սերունդի վաւակներուն մօտ, անոնց սրտերուն մէջ վառ պահելու սէրը՝ հանդէպ մեր սրբազան մշակոյթին»:

18. «ԱՆԱՐԱՏ ՍՐԻՈՅ ՎԱԽՃԱՆԸ»: Արազ Տպ., Պէյրութ, 1988: Էջք՝ 334: Խմբագրեց եւ հրատարակեց ֆրանսահայ մտաւորական Կարօ Մխիթարի (Մարտիրոս Թաշճեան) այս երկրորդ հատորը, վերջինիս հիւանդութեան եւ տարիքի յառաջացման պատճառաւ: Յառաջաբանը գրուած է Սրբազան Հօր կողմէ:

19. «Հայրենի Յուշեր Սօտիկ Անցեալից», Տպ. Միհրան Գարտաշեան, Պէյրութ, 1988: Էջք՝ 160: Խմբագրեց եւ հրատարակեց ֆրանսահայ Վաղարշակ Միւնիի-Գէորգեան (Սէն Ռաֆայէլի Հանգստեան Տուն) յուշերն եւ քերթուածները: Յառաջաբանը գրուած է Սրբազան Հօր կողմէ:

20. «Ուսումնասիրութիւններ եւ Յօդուածներ», Տպ. Անթիլիաս, 1989: Էջք՝ 262: Յաւերժացնելու համար յիշատակը Տ. Շահէ Արքեպս. Գասպարեանի (1882-1935), Վարդան Սրբազան Խմբագրեց եւ

սրբագրությունը կատարեց՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռի Զարեհ-
եան Դպրեվանքի Ա. Վերատեսուչ Հոգեւոյս Սրբազանին բոլոր
ուսումնասիրություններն ու յօթուածները, միաժամանակ պատ-
րաստելով կենսագրականը եւ գործոյ ցանկը: Հատորը լոյս տեսաւ
մեկենասութեամբ Լիբանանի Այնթապցիներու Հայրենակցական
Միութեան Վարչութեան:

21. «Մեռած Արտի մը Յարութիւնը», Աղպարենց Գրական Մատեն-
աշարի Ա. Հատորը (Թիւ 1), Պէյրութ, 1991: Էջք՝ 216: Խմբագրեց
եւ հրատարակեց Եղիա Եղիապարեան-Աղպարենցի կամ Տէր-Ղապար-
եանի իրական կեանքէ առնուած եւ սպանդէն ազատուած վէպի
ձեռագիրը՝ գրուած 1914-ին:

22. «Կտակը», Աղպարենց Գրական Մատենաշարի Բ. Հատորը (Թիւ
2), Պէյրութ, 1992: Էջք՝ 224: Խմբագրեց եւ հրատարակեց Եղիա
Եղիապարեան-Աղպարենցի կամ Տէր-Ղապարեանի հայ-ընտանեկան
կեանքէ առնուած վէպը, Բ. տպագրություն:

23. «Ա. Ուխտին Ողջակէզը Կամ Կոյս Մնացած Կինը» (վիպակ Պուլ-
սական կեանքէ առնուած), «Երեք Հազարի Երազը» (իրավէպ
Ամերիկեան կեանքէ), Բ. տպագրություն, եւ «Յուշեր Կարապետ Յ.
Քացախեանի (Ա. Մաս)», Ա. տպագրություն, Աղպարենց Գրական
Մատենաշարի Գ. Հատորը (Թիւ 3), Պէյրութ, 1993: Էջք՝ 224:
Խմբագրեց եւ հրատարակեց Եղիա Եղիապարեան-Աղպարենցի կամ
Տէր-Ղապարեանի վերոյիշեալ գործերը:

«Գրական Միւրանք Մը» վերնագրով, Պուլկարահայ յայտնի
լրագրող եւ թարգմանիչ Յակոբ Օրմանճեանի 6 Յուլիս 1994-ի
գրախօսականին մէջ կը կարդանք հետեւեալ հաստատումները՝
Աղպարենց Գրական Մատենաշարի Թիւ 1, 2 եւ 3 հատորներու
մասին.

«Տոհմի մը, գերդաստանի մը պատմությունը եւ նկարագրա-
կանը հազարումէկ թելերով կապուած է ազգային եւ քաղաքական
կեանքի անցուդարձերուն հետ: Եւ ճիշտ այդ պատճառով ալ, ան
կը դառնայ ազգային պատմութեան փոքր բջիջը, անոր մէկ օղակը:
Այս առումով, Գերշ. Տ. Վարդան Արքեպս. Տէմիրճեանի պատուար-
ժան աշխատասիրությունը լուրջ ներդրում մըն է մեր ազգային
պատմավաւերագրական գրականութեան գանձարանին մէջ: Երեք
հատորներու լոյս ընծայումը եւ այն ալ երեք տարուայ ընթացքին,
կարելի է գրական եւ հրատարակչական ՄԽԲԱՆԲ մը արժեքաւորել,
Սփիւռքի դժուարին պայմաններուն մէջ: Մեծածավալ գրական,
հաւաքական, տեղեկագրական, մատենագրական եւ հատկապէս

խմբագրական աշխատանք մըն է...: ...Գրական մատենաներ միշտ եղած են ժամանակի ճշմարիտ վկայագիրները եւ պիտի մնան այդ-պիսինը, որպէս Հայ ժողովուրդի ողիսականի անժխտելի ապացոյցները: Կարեւորն է գրող եւ հրատարակող լինի եւ կարեւորագոյնըընթերցողներ»:

24. «Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռի Երան. Տ. Բարգէն Աթոռակից Կաթողիկոս Կիւլէսէրեանին (1868-1936) Անտիպ Նամակները, Ուղղուած Վիեննական Միֆթարեան Հայրերուն (1885-1936)», Տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, 1996: Էջք՝ 302: Այս առթիւ Պէյրութի «ԳԻՏԱԿ» (Մարտ 1997, Թիւ 11, էջ 53) ամսաթերթի մէջ լոյս տեսաւ կարճ գրախօսական մը: Այլ գրախօսականներուն շարքին կարելի է նշել.

«ԱԶԳԱԿ»-ի (27 Գեկտեմբեր 1996) մէջ Շահանդուխտ կը գրէր. «...Վարդան Արք. Տէմիրճեան, իր այլ բանասիրական, ար-խիւալին թանկագին ձեռագիրներու պահպանման համար տարած այլ հետազոտութիւններու եւ ուսումնասիրութեանց վրայ կ'աւել-յրնէ իր այս նոր աշխատասիրութիւնը...: Գովելի աշխատանք մը, մանաւանդ, որ անծանօթ մնացած է Բարգէն Աթոռակից Կաթողի-կոս: Պատմութեան, բանասիրական-արխիւալին վաստակ մը, որ պիտանի է անկասկած»:

Հ.Բ.Բ.Մ./Հ.Ե.Ը.ի Լիբանանի Շրջանակի Պաշտօնաթերթ «ԽՕՄՆԱԿ»-ի (ԼԸ. Տարի, Թիւ 6, Փետր-ուար 1997, էջ 25-26) եւ Լոս Անճելըսի «ՆՈՐ ԿԵԱՆՔ»-ի (ԺԹ. Տարի, Թիւ 19, 17 Ապրիլ 1997, էջ 5) մէջ, Յակոբ Ալթունեան կը շնորհաւորէր Վարդան Սրբազանի անդուլ եւ բեղուն աշխատանքը, անոր վրայ աւելցող այս գեղեցիկ հատորը, եւ գէթ տարուած երախտապարտ գործունէութիւնը:

Նմանապէս, իր 4 Հոկտեմբեր 1997 թ. նամակով՝ Հայաստա-նի Ազգային Գրադարանի Տնօրէն Գէորգ Տէր-Վարդանեան կը նշէր. «Բարկէն Կաթողիկոսի նամակների հատորը գիտական շատ մեծ օգտակարութիւն ունի, արժէքաւոր է նաեւ Ձեր Յառաջաբանը, նրա մատենագիտական հատուածը՝ յատկապէս: Գիտական նամա-կագրութիւնը գիտականին հաւասար ունի նաեւ ուսումնական-ճանաչողական կարեւորութիւն յատկապէս նոր սկսող սերնդի համար.....»:

Իսկ Աւստրիահայոց Առաջնորդ Տ. Մեսրոպ Ս. Արք. Գրիգոր-եանի Նոյեմբեր 1997-ի գրախօսականին մէջ կարելի է կարդալ. «...Հատորը պատրաստուած է բծախնդիր հոգատարութեամբ եւ

գիտական հմտութեամբ, վասն որոյ կը շնորհաւորենք Վարդան Սրբազանը.....»:

25. «Պատմութիւն Յունաստանի Հայոց» (անտիպ):

26. «Համապատկեր Հայ Հոգեւորականաց», ողջ եւ վախճանեալ եկեղեցականներու կենսագրականք (անտիպ):

27. «Համառօտ Պատմութիւն Սփիւքբահայ 30 Գաղութներու» (անտիպ):

Բանասիրական այլ աշխատասիրութիւններ եւ յօդուածներ.

28. «Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անցեալի եւ Այժմու Թեմերու Վիճակագրական Պատկերը, 1902-1962»: Յօդուածաշարքը (ստորագրուած 5 Փետրուար 1962) լոյս տեսած է Պէյրութի ԱԶԳԱԿ օրաթերթին մէջ, ինք յօդուածներով եւ 23 էջերով, 16-17, 21 եւ 26-27 Փետրուար, եւ 6-7 եւ 13-14 Մարտ 1962 թուականներուն: Սոյն յօդուածաշարքը նոր յաւելումներով լոյս տեսաւ Վարդան Սրբազանի ԼԱՄԲՐՈՆ ՏԱՐԵԳԻՐԹԻՆ մէջ:

29. Հրատարակած է Կիրակնորեայ Դպրոցներու (տպագրուած 1961-1962, Անթիլիաս) եւ Թաւրիպի Եկեղեցասէր Կանանց Միութեան (բազմագրուած 1964-1967, Թաւրիպ) «ԴՐԱԶԱՐԿ» ամսագիրները, որոնց մէջ ստորագրած է բազմաթիւ յօդուածներ:

30. 1965-ին կազմած է «Մարդահամարը Ատրպատականի Հայ Գաղութին» (անտիպ) եւ 1970-էն սկսեալ ձեռնարկած է Լիբանանաբնակ Այնթապցիներու մարդահամարի կազմութեան, խնդրանքովը Լիբանանի Այնթապի Հայրենակցական Միութեան Վարչութեան:

31. «ՀԱՄԿ» ամսագրի խմբագրութեան մաս կազմած է 1972-1980 թուականներուն եւ խմբագրի պաշտօնը վերստանձնած է 3 Յունուար 1989-էն սկսեալ, եւ սրբագրած 1988 Յունիս-Օգոստոս թիւէն սկսեալ բոլոր համարներու յօդուածները մինչեւ 1996:

32. Պրն. Բիւզանդ Եղիայեանի աշխատասիրութեամբ հրատարակուած «Ժամանակակից Պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ, 1914-1972» (1975, Անթիլիաս) արժէքաւոր գործին «Անուանացանկ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միաբանութեան եւ Դպրեվանքի Սաներու» հատուածին (էջք՝ 897-920) ամբողջացումը, վարդան Սրբազանի կողմէ կատարուած է՝ 250 մոռցուած անուններու յաւելմամբ, անոնց մասին համապատասխան ծանօթագրութիւններով: Հատորին մէջ այս մասին ոչ մէկ յիշատակութիւն կատարուած է:

33. 1977-ին կատարեց առաջին մեքենագրությունը Յակոբ Օշականի «Համապատկեր Արևմտահայ Գրականության», Է. հատորի (Արուեստագետ Սերունդ), Տիկին Արաքսի Օշականի ձեռագիր տետրակներէն, որմէ ետք Եղիշէ Վարդերեսեան կատարեց Բ. մեքենագրությունը, «երբեմն զայն բաղդատելով կատարուած ալլարտադրութեանց հետ»: Լոյս տեսաւ 1979-ին, Անթիլիաս, 432 էջ:
34. «Հայոց Պատմութիւն», դասագիրք, պատրաստուած Էշթէֆիէի Ազգային Գէորգ Չաթալպաշեան Երկրորդական Վարժարանի 8-րդ կարգի համար, 1977-1978 տարեշրջանէն սկսեալ: 70 բազմագրեալ էջերով, ամփոփուած Գառնիկ Գիւլալեանի համանուն գիրքէն:
35. Լիբանանահայ արձակագիր եւ առակագիր Տոքթ. Յ. Գեղարդի (Տոքթ. Յարութիւն Գալանճեան) «Սամինի Հրաբուխը», քերթուածներ եւ արձակ էջեր, մեքենագրեց 1977-ին, Անթիլիասի Կաթողիկ. Տպարան, 68 էջ, եւ «Սիրոյ եւ Մեղքի Համանուագ», քերդուածներ, Տպ. Անթիլիաս, 1977, 152 էջ:
36. «Լիբանանահայ Բարի եւ Խոնարհ Առաջնորդը», (Տ. Տաճատ Ս. Արքեպիսկոպոսի վախճանման առիթով), ԱԶԳԱԿ, 8 Սեպտ. 1978 (էջ 3, 52-րդ Տարի, թիւ 159) եւ ԱՐԱՐԱՏ, 11 Սեպտ. 1978 (ԽԱ. Տարի, թիւ 11,078): «Կենսագրական Տ. Տաճատ Արքեպիսկոպոսի», առանց Վարդան Սրբազանի անունան յիշատակումին, ԱԶԳԱԿ, 7 Սեպտ. 1978 (էջ 1, 52-րդ Տարի, թիւ 158), հետեւեալ խորագրին ներքեւ.- «Լիբանանի Հայութիւնը Սուգի մէջ է, Տաճատ Արքեպ. Ուրֆալեան Վախճանեցաւ»:
37. «Կորսուած Յիշատակարաններ, Կիլիկիոյ Հայկական Վանքերն ու Եկեղեցիները», Վարդան Եպիսկ. Դարբինեան, ԱԶԳԱԿ, 6 յօդուածաշարքերով, կիսատ մնացած: 26-31 Յունիս եւ 1 Յուլիս 1978, 52-րդ Տարի, թիւ 14,064-14,069: Նախապէս լոյս տեսած՝ Անի Պարբերագիրք, Պէյրութ, 1975, Տպ. Մշակ, էջ 460-486:
38. «Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Եպիսկոպոսական Դասը 1900-1978 Թուականներուն», Վարդան Եպիսկ. Դարբինեան, ԱՐԱՐԱՏ, 6 յօդուածաշարք: 20-23 եւ 26-27 Գեկտեմբեր 1978, ԽԲ. Տարի, թիւ 11,124-11,129:
39. Գերշ. Տ. Մեսրոպ Արքեպ. Աձեանի խմբագրութեամբ, 1979-ին Պէյրութի մէջ հրատարակուած «Դիւան Մեսրոպ Դ. Թաղիադեան» բանասիրական հատորի «Անձնանունների եւ Տեղանունների» ցանկերու պատրաստութիւնը՝ էջք 609-647: Գրքին մէջ հրատարակուած համառոտուած ցանկերն են: Բուն աշխատութիւնը կը մնայ անտիպ: Այս առթիւ ոչ մէկ յիշատակութիւն կատարուած է:

40. «Եպիսկոպոսական Չեռնադրուժիւն», նկարագրութիւն 17 եւ 18 Մայիս 1980, Անթիլիասի Մայր Տաճարին մէջ տեղի ունեցած Ծայր. Վարդապետութեան եւ Եպիսկոպոսական Չեռնադրութեան՝ Տ. Կորիւն Պապեան, Տ. Եփրեմ Թապաքեան, Տ. Զարեհ Ազնաւորեան եւ Տ. Արամ Քէշիշեան (այժմ Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ) Ծայր. Վարդապետներու: ՀԱՄԿ, 1980, Յունուար-Յունիս, էջ 133-142: «Կենսագրական Գիծեր Չորս Եոթասակ Եպիսկոպոսներու, որոնք ձեռնադրուեցան 18 Մայիս 1980-ին, Կիրակի օր, Անթիլիասի Մայր Տաճարին մէջ»: ՀԱՄԿ, 1980, Յունուար-Յունիս, էջ 143-149: ԱՐԱՐԱՏ, 4 Յունիս 1980, ԽԳ. Տարի, թիւ 11,401, էջ 3-4: ԱԶԳԱԿ հրատարակած է կենսագրութիւնները, առանց յօդուածագրին անունը յիշատակելու, 5 Յունիս 1980, 54-րդ Տարի, թիւ 75, էջ 3:
41. Խմբագրեց եւ հրատարակեց Տիկ. Մարիա Մուշտակունի-Զէյթճեանին «Կրօնաշունչ Խօսքեր»ը, քերթուածներ եւ Աբրահամ Խօճա Լեւոնեանին հոգեւոր մտածումները, որոնք հաւաքուած եւ կազմուած էին Տիկ. Մուշտակունիին կողմէ: Արազ Տպ., 1981, Պէյրութ, 288 էջ:
42. 1982-1984՝ Վարդան Սրբազան խմբագիրն էր «ԵՈՐ ԱՅՆԹԱՊ» պարբերաթերթին, Պէյրութ:
43. Քէսապի Ուսումնասիրաց Միացեալ վարժարանի վաստակաւոր Ուսուցիչ եւ Տնօրէն Յակոբ Աթիկեանի (1902-1978) խմբագրած «Համառօտ Պատմութիւն Հայ Գաղթավայրերու» հատորին երիցս սրբագրութիւնը կատարեց, Գ. սրբագրութիւնը կատարեց՝ Գերշ. Տ. Արտաւազդ Արքեպս. Թրթռեանը: Տպ. Անթիլիաս, 1985, 290 էջ:
44. «Զեռագրագիտական Ուսումնասիրութիւններ - Կիլիկիոյ Կաթողիկոսարանի Զեռագիր Գանձերը», ԱՐԱՐԱՏ, 6, 9 եւ 11-13 Փետրուար 1986, Ծ. Տարի, թիւ 13,009, 13,011-13,014: ԱՐԱՐԱՏ ԲԱՅԱՌԻԿ, 1 Յունուար 1986, էջ 36-37, 42 (Շարունակելի, տրուած է միայն Ա. մասը, ապա ամբողջը հրատարակուած ԱՐԱՐԱՏ օրաթերթին մէջ): ՀՐԱՅՐՔ Շաբաթաթերթ, Վիեննա (դադրած), 13 Հոկտեմբեր 1986, թիւ 6, էջ 13-16, 27 Հոկտեմբեր 1986, թիւ 8, էջ 12-14:
45. Մեքենագրեց՝ 104 էջերը (21 Մարտ 1986-ին աւարտեց) եւ երիցս սրբագրեց հոգելոյս Տ. Ղեւոնդ Արքեպս. Զէպէյեանի «Ծիսական Գիտելիքներ» հատորը, Տպ. Անթիլիաս, 1986, էջք 134: Ղեւոնդ Սրբազան իր «Շնորհակալիք»ին մէջ, ի միջի այլոց կը գրէ «Շնորհակալութիւն Գերշ. Տ. Վարդան Եպիսկոպոս Տէմիրճեանին, որ ձեռագրիս մեքենագրութիւնը կատարեց»:

46. Հայրենի գրող եւ արձակագիր Յովհաննէս Արամի Ղուկասեանի Երկերի ժողովածուն «Պատմութիւններ»ը երիցս սրբագրեց - Բ. տպագրութիւն: Սոյն գործին սրբագրութիւնը կատարեցին նաեւ Տ. Արտաւազդ Արքեպս. Թրթռեան եւ Օր. Արտեմիս Հալապոյթեան (2-9-1993): Տպ. Անթիլիաս, 1993: Էջք՝ 302: Ա. տպագրթ. 1976, Սովետական Գրող Հրատարակչատուն, Երեւան, Ա. մասը էջ 1-318 լոյս տեսաւ Անթիլիասի հրատարակութեան մէջ: Սոյն հատորին հրատարակութիւնը ձօնուած է պարսկահայ ազգայիններէն Պրն. Տիգրան Սարաճեանին:

47. Հայրենի գրող եւ արձակագիր Գուրգէն Մահարիի այրիին՝ Տիկ. Անտոնինա Մահարիի յուշերը «Իմ Ողիսականը» խորագրով, երիցս սրբագրեց: Ա. տպագրութիւն, 1994, Անթիլիաս, 168 էջ: Նիւթը՝ Ստալինեան շրջանի զոհերու մասին է: Ռուսերէնէ թրգմ. Վահան-Հերազ Իշխանեան, Առաջաբանի հեղինակ եւ Խմբագիր Ռուզան Խաչատրեան:

48. Հայրենի գրող եւ արձակագիր Վալտեր Արամեանի «Կոլիմա» (Յուշեր Կոլիմա Գետի Բանտից) գործը հինգ անգամ սրբագրեց: Ա. տպագրութիւն, 1994, Անթիլիաս, 368 էջ: «Խմբագրական Ծանօթութիւններ Հեղինակի Մասին» (էջ 3-4), պատրաստեց Խմբագրութիւնը (Վարդան Եպիսկոպոս Տէմիրճեան):

Տ. Վարդան Ս. Արքեպիսկոպոս Տէմիրճեան աշխատակցած է հայկական մամուլի զանազան թերթերու հետ, որոնց կարգին կարելի է յիշել.- «ՀԱՄԿ» ամսագիրը (Անթիլիաս), Պէյրութի՝ «ԱԶԳԱԿ», «ԱՅԳ» (դադրած), «ԱՐԱՐԱՏ» եւ «ԶԱՐԹՕՆՔ» օրաթերթերը, «ՍՓԻԻՌ» եւ «ՆԱՅԻՐ» (դադրած) շաբաթաթերթերը, «ՆՈՐ ԿԵԱՆՔ» (դադրած) եւ «ԳԻՏԱԿ» ամսագիրները, «ՆՈՐ ԱՅՆԹԱՊ» եւ «ԱՐԾԻԻ» պարբերաթերթերը, «ԱՆԻ» պարբերականը, Գլխավորի «ԳԼԱՉՈՐ» պարբերաթերթը, «ԳՐԱԶԱՐԿ» տարեգիրքը եւ նոյնանուն ամսագիր-ը (Անթիլիաս եւ Թաւրիզ), ինչպէս նաեւ Թեհրանի «ԱԼԻՔ», Գահիրէի «ՅՈՒՍՒԲԵՐ», Աթէնքի «ԱԶԱՏ ՕՐ», Պոսթընի «ՀԱՅՐԵՆԻՔ», Փարիզի «ՅԱՌԱՋ» եւ Հալէպի «ԱՐԵՒԵԼԻ» (այժմ դադրած) օրաթերթերը, Լոս Անճելոսի «ՆՈՐ ԿԵԱՆՔ» եւ Վիեննայի «ՀՐԱՅՐԻ» (դադրած) շաբաթաթերթերը, եւ Միլանոյի Բազմաբնուէստից Կաճառին Հայկական ճարտարապետութիւնն Ուսումնասիրող Միութեան, հրաւերովը՝ ճարտարապետ Փրոֆ. Ալբակոյ Ատրիանօ Նովելլոյի եւ ճարտ. Հերման Վահրամեանի:

LITERARY ACTIVITIES

In addition to various research studies and surveys, and numerous articles in the Armenian media, Archbishop Vartan has written over 25 books (in Armenian), mainly about the Armenian Church and the Armenian Communities in the diaspora. The following are his major works:

1. *Catalogue of the Manuscripts of the Catholicosate of the Great House of Cilicia*, 1960, Antilias;
2. *Diaries of Archbishops Andreas and Thadeus and History of the Seminary of the Catholicosate of the Great House of Cilicia*, 1960, Beirut, 185 pp.;
3. *Catalogue of the Manuscripts of the Armenian National Library of Ghalatia*, 1961, Antilias;
4. *History of the Armenian Apostolic Holy Church (Textbook)*, 1963, Beirut;
5. *Divan (Records) of the History of the Armenians of Azerbaijan (Iran)*, Volume 1, 1966, Tehran. 2nd Edition, 1980, Beirut, 288 pp.;
6. *Album of Saint Vartan*, 1967, Beirut, 24 pp.;
7. *Commemorative Records of Archbishop Nerses Melik Tankian*, 1968, Tehran, 316 pp.;
8. *The Ballad-maker, Archbishop Mardiros Uromanetsi*, 1974, Antilias, 189 pp.;
9. *Divan (Records) of the History of the Armenians of Azerbaijan (Iran)*, Volume 2, *Report of the Prelacy Activities 1963-1969*, 1974, Beirut, 294 pp.;
10. *Historic Book of Boghos and Mary Nadjarians*, 1974, Beirut, 157 pp.;
11. *Divan (Records) of the History of the Armenians of Azerbaijan (Iran)*, Volume 3, *Catalogue of the Manuscripts of the Melik Tankian National-ecclesiastic Museum*, 1977, Antilias, 136 pp.;
12. *Divan (Records) of the History of the Armenians of Azerbaijan (Iran)*, Volume 4, *Maps of Armenia and Iran, Information on Azerbaijan (Iran), Articles*, 1977, Beirut, 109 pp.;
13. *Crosierbook of the Armenian Prelacies of Lebanon and Syria*, Volume 1, 1980, Beirut, 248 pp.;
14. *Book of Grievances*, edited and published the book of the Franco-Armenian intellectual Garo Mekhitar (Mardiros Taschdjian), 1981, Beirut, 248 pp.;
15. *Bouquet of Sermons and Studies (1957-1981)*, 1981, Beirut, 448 pp.;
16. *Shadows of Faces, National and Clerical Figures*, 1983, Beirut, 224 pp.;
17. *Lampron Annals, National Ecclesiastical, Histrophilological, Statistical Studies*, Volume 1, 1986, Beirut, 256 pp.;

18. *The End of Pure Love*, wrote the preface, edited and published the book of the Franco-Armenian intellectual Garo Mekhitar (Mardiros Taschdjian), 1988, Beirut, 334 pp.;
19. *Native Memories of the Recent Past*, edited and published the memoirs and poems of the Franco-Armenian Vagharshag Siuni-Kevorkian, 1988, Beirut, 160 pp.;
20. *Studies and Articles of Archbishop Shahe Kasparian (1882-1935)*, Antelias, 1989, 262 pp.;
21. *The Resurrection of a Dead Heart*, Aghzarents Literary Series, Volume 1 (No. 1), edited and published the novel of Yeghia Yeghiazarian-Aghzarents, 1991, Beirut, 216 pp.;
22. *The Will*, Aghzarents Literary Series, Vol. 2 (No. 2), edited and published the novel of Yeghia Yeghiazarian-Aghzarents, 2nd edition, 1992, Beirut, 224 pp.;
23. *The Sacrifice of the First Pilgrimage or the Woman Who Stayed a Virgin; The Dream of Three Thousand* (2nd edition); *Memoires of Garabet H. Katsakhian* (1st part), Aghzarents Literary Series, Vol. 3 (No. 3), edited and published the works of Yeghia Yeghiazarian-Aghzarents, 1993, Beirut, 224 pp.;
24. *The Unpublished Letters of the Late Archbishop Papken Gulesserian (1868-1936)*, Assessor Catholicos of the Holy Seat of the Great House of Cilicia, addressed to the Fathers of the Mekhitarist Congregation of Vienna, 1996, Antelias, 302 pp.;
25. *History of the Armenians of Greece* (unpublished);
26. *Overview of the Armenian Clergy – Biographies of Both Living and Dead Clergymen* (unpublished); and
27. *Brief History of 30 Armenian Diaspora Communities* (unpublished).

